



ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

Ի՞նչու Դժգոհ են Լաւրովն ու Լուքաշենքոն

Ռուսաստանի նախագահ Փուլին Պաքու կատարած իր այցելութեան ընթացքին յայտարարեց, որ պիտի կապուի Հայաստանի վարչապետին հետ ու անոր պիտի պատմէ Ալիեւի հետ ունեցած բանակցութիւններու մասին: Այս դրական մտեցումին անմիջապէս յաջորդեցին արտաքին գործոց նախարար Սերկէյ Լաւրովի ապատեղեկութիւն պարունակող մեղադրանքները եւ Մոսկուայի «բանբեր», Պելաճուսի նախագահ Ալեքսանտր Լուքաշենքոյի հակահայ վիրավորական յայտարարութիւնները, որոնք չեն նպաստեր Ռուսաստան-Հայաստան կապերու պահպանման եւ ընդհակառակը, երկու երկիրները աւելի կը հեռացնեն իրարմէ:

Ռուսաստանի արտաքին գործերու նախարարը երեւանը մեղադրած է Սիւնիքով անցնող հաղորդակցութիւններու հարցով պայմանաւորուածութիւնները «սապաթած» ենթարկելու մէջ:

«Մենք կողմ ենք խաղաղութեան պայմանագրի շուտափոյթ ստորագրման եւ կապուղիներու ապաշրջափակման: Ցաւօք, ինչ կը վերաբերի Հայաստանի Սիւնիքի մարզով անցնող կապուղիներուն, նոյն ինքն հայկական ղեկավարութիւնը սապաթած կ'ենթարկէ համաձայնութիւնը, որուն տակ կայ վարչապետ Նիկոլ Փաշինեանի ստորագրութիւնը»: Այս խօսքերու հեղինակը, որ մասնակից եղած է վերջին տարիներու բոլոր տխուր իրադարձութիւններուն, իրողութիւնները խեղափոխելով թերեւս կարողանայ շփոթեցնել իր երկրի անտեղեակ հասարակութիւնը, սակայն՝ ո՛չ Հայաստանի ժողովուրդը:

Լաւրով կ'ակնարկէ 44-օրեայ պատերազմի ավարտին ստորագրուած յայտարարութիւններուն, որոնց տակ կայ Փաշինեանի ստորագրութիւնը: Սակայն հոն կան նաեւ Փուլինի եւ Ալիեւի ստորագրութիւնները եւ այս երկուքը՝ անցնող չորս տարիներուն ամէն ինչ ըրին՝ այդ փաստաթուղթերը դարձնելու անիմաստ ու ժամանակավրէպ: Այդ համաձայնութիւններուն գլխաւոր կէտերը կը վերաբերին Լեռնային Ղարաբաղի յարակից հինգ շրջաններէն Հայկական զօրքերու դուրս բերման: Հայաստան կատարեց իր պարտաւորութիւնը, իսկ Ռուսաստան եւ Ատրպէյճան ոտնակոխ ընելով միւս բոլոր կէտերը Արցախը ենթարկեցի հայաթափումի:


Հայաստան Կոչ Կ'ընէ Ռուսաստանի Գործընկերներուն Կողմնակալ Յայտարարութիւններով Սապաթած Զենթարկելու Հարաւային Կովկասի Մէջ Խաղաղութեան Հասնելու Զանքերը

Հայաստանի Արտաքին Գործոց Նախարարութիւնը պատասխանած է լրատուամիջոցներէն ստացուած հարցումին՝ կոչ ընելով Ռուսաստանի գործընկերներուն կողմնակալ յայտարարութիւններով սապաթածի չենթարկելու Հարաւային Կովկասի մէջ խաղաղութեան Հասնելու Զանքերը :

ՌԴ ԱԳ նախարարը յայտնած է, որ Հայաստանը սապաթածի կ'ենթարկէ Սիւնիքի մարզով կապուղիներու ապաշրջափակման պայմանաւորուածութիւնը: Այս կապակցութեամբ Հայաստանի Արտաքին Գործոց նախարարութիւնը յայտնած է.

«Հայաստանի վերաբերեալ ՌԴ ԱԳ նախարարութեան զանազան պաշտօնեաների՝ իրականութեանը չհամապատասխանող, ակնյայտօրէն կողմնակալ, յաճախ անյարգալից մեկնաբանութիւնները, ցաւօք, վաղուց արդէն նորոյթ չեն, եւ եթէ նկատել էք, տեւական ժամանակ է, ինչ մենք անգամ չենք անդրադառնում դրանց:

«Այնուամենայնիւ, չենք կարող չափել, որ ՌԴ արտաքին քաղաքական գերատեսչութեան ղեկավարի երէկուայ յայտարարութիւնը ոչ միայն գոտ ափսոսանք է յառա-



ջացնում, այլեւ կասկածի տակ է դնում Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ յարաբերութիւնների կարգաւորման գործընթացում Ռուսաստանի Դաշնութեան կառուցողական ներգրաւուածութիւնը:

«Երբեմնի միջնորդական առաքելութիւն ստանձնած, 2020թ. Նոյեմբերի 9-ի յայտարարութիւնը ստորագրած, դրա հիման վրայ տարածաշրջանում խաղաղապահ գործախումբ տեղակայած պետութեան ԱԳ նախարարը չի կարող չտեսնել,

որ չկայ այդ յայտարարութեան գեթ մէկ առանցքային կէտ, որն անդառնալիօրէն խախտուած չլինի՝ չնայած դրա ներքոյ ՌԴ ստորագրութեանը եւ դրանով նախատեսուած գործընթացներում ՌԴ մասնակցութեանն ու պատասխանատուութեանը: Կարծում ենք նաեւ, որ ՌԴ ԱԳ նախարարը քաջատեղեակ է, որ հրապարակային փաստաթղթերից դուրս՝ Հայաստանը

«Որո՞ւն Պէտք են Հայերը՝ Բացի Մեզմէ». Ըսած է Պելաճուսի Նախագահ Լուքաշենքո

Պելաճուսիոյ նախագահ Ալեքսանտր Լուքաշենքոն ռուսական հեռուստալիքին տրուած հատցազրոյցի ըմթացքին անդրադարձած է նաեւ Հայաստանի ղեկավարութեան վրած քաղաքականութեան ու ըսած է. «Որո՞ւն պէտք են հայերը՝ բացի մեզմէ, թող անոնք զարգացնեն իրենց տնտեսութիւնը, ի՞նչ Ֆրանսա, ի՞նչ Մաքրոն, Մաքրոնը վաղը չ'ըլլար՝ բոլորը կը մոռնան Հայաստանի մասին»:

Ալեքսանտր Լուքաշենքոն թժգոհութիւն յայտնած է, որ յետխորհրդային տարածքի որոշ երկիրներ կը փափաքին Ռուսաստանէն ինչ-որ բան վերցնել, բայց փոխարէնը ոչինչ կու տան:

«Մենք (Պելաճուսիան ու Ռուսաստանը) իրականութեան մէջ նոյն նաւակին մէջ ենք, եթէ այն շրջուի, երկուքս ալ պիտի խեղդուինք՝ ե՛ւ Ռուսաստանը, ե՛ւ Պելաճուսիան, ի՞նչ թաքցնենք դաշնակցային յարաբերութիւններուն մասին, մենք չենք սկսիր աղմկել, ինչպէս մեր որոշ յետխորհրդային պետութիւններ. անոնք կ'ուզեն ինչ-որ բան վերցնել Ռուսաստանէն, բայց փոխարէնը ոչինչ կու տան», - ըսած է Լուքաշենքոն:

«Եկէք միասին ըլլանք, հե-



Պելաճուսիոյ նախագահ Ալեքսանտր Լուքաշենքո

ռու չէ ժամանակը, երբ դուք պիտի գաք նոյն Ռուսաստան եւ խնդրէք աջակցութիւն եւ օգնութիւն, այլ դիմելու տեղ չկայ:

Ան վստահութիւն յայտնած է, որ արտակարգ իրավիճակներու պարագային ԱՊՀ երկիրները պիտի դիմեն Ռուսաստանին ու Պելաճուսիոյ՝ օգնութեան համար:

Վերջինս նաեւ կոչ ըրած է չկորսնցնելու յետխորհրդային տարածքին կառուցուած տնտեսական կապերը:

ԵՄ-ն Պաքուին Կոչ Կ'ընէ COP29-էն Առաջ Խաղաղութեան Համաձայնագիր Ստորագրելու

Եւրոմիութիւնը կոչ կ'ընէ Ատրպէյճանի իշխանութիւններուն խաղաղութեան համաձայնագիր ստորագրելու Հայաստանի հետ, Նոյեմբերի Պաքուի մէջ կայանալիք ՄԱԿ-ի կլիմայական համաժողովէն առաջ (COP29): Այս մասին կը յայտնէ պրիւսէլեան EUobserver-ը՝ յղում կատարելով Եւրոյան ձնաժողովին:

Փամանակն է վճռական քայլեր ձեռնարկելու կայուն եւ տեւական խաղաղութեան ճանապարհին: Ատրպէյճանը պէտք է օգտագործէ COP-29-ի հնարաւորութիւնը Հայաստանի հետ խաղաղութեան համաձայնագիր ստորագրելու համար, - EUobserver-ին յայտնած է Եւրոյան ձնաժողովի խօսնակը:

Մայիսին ԵՄ Արտաքին յարաբերութիւններու յանձնաժողովի ներկայացուցիչն ալ յայտնած էր, որ COP29-ը լաւ առիթ է

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Ինչպես է Նաև Եւ Գագ Արտահանող Ատրպեյճանը Ընդունելու COP29-ը Եւ Ով Է Դժգոհ

ՇՈՒՇԱՆԱ ԳՐԻԳՈՐԵԱՆ

Նաև Եւ Գագ արտահանող ու գործարաններով միջուկորտը շարունակաբար աղտոտող երկիրը, որտեղ աղբի տեսակաւորումն անյայտ արտադրութիւն է, որտեղ լրագրողներն ու իրաւապաշտպանները բանտում են, լրատուամիջոցները՝ խիստ հակողութեան տակ, այս տարի կը հիւրընկալի կլիմայի փոփոխութեանը նուիրուած միջազգային խոշոր համաժողով:

Սա վրդովեցնում է կանաչ կներգիայի համար պայքարող կազմակերպութիւններին եւ միջազգային դիտորդներին, ովքեր կարծում են, որ Ատրպեյճանը ցանկանում է բարձրացնել իր հեղինակութիւնը համաժողովի օգնութեամբ:

Լուրն այն մասին, որ Ատրպեյճանը կը հիւրընկալի ՄԱԿ-ի կլիմայի փոփոխութեան 29-րդ համաժողովը (COP29), երկրում հպարտութեան ալիք է առաջացրել տեղական մամուլի, պաշտօնեաների եւ քաղաքական գործիչների շրջանում:

«Ատրպեյճանում COP29-ի անցկացումը համաշխարհային ասպարէզում երկրի հեղինակութեան յստակ ցուցիչ է», «Ատրպեյճանը կը լինի աշխարհի ուշագործութեան կեդրոնում», «Միջազգային ճանաչում եւ աջակցութիւն համաշխարհային հանրութեան կողմից», «Պաքուն կը դառնայ աշխարհի

կեդրոնը»։ Սրանք վերնագրեր են ատրպեյճանական իշխանամէտ լրատուամիջոցներում հրատարակուած նորութիւններից:

Իշխանութիւնները կարծես թէ ակտիւօրէն սկսել են նախապատրաստուել օտարերկրացիների հոսքին, բայց դա արւում է իւրովի: Նախագահ Իլհամ Ալիեւը յայտնել է, որ համաժողովի ընթացքում ակնկալուած է 70-80 հազար օտարերկրացիների այցը երկիր:

Օգոստոսի 1-ին վարչապետ Ալի Ասադովը յայտարարել է, որ իշխանութիւնները որոշել են՝ համաժողովի ընթացքում ուսանողներին հեռավար ուսուցման կը տեղափոխեն, իսկ դպրոցականներին արձակուրդ կ'ուղարկեն:

Միեւնոյն ժամանակ, որոշ հանդիսութիւնների տներ եւ մեծ ռեստորաններ դադարեցրել են Նոյեմբերին հարսանիքների պատուէրներ ընդունել:

Ատրպեյճանական լրատուամիջոցները գրում են, որ որոշ հաստատութիւններ դա արել են կամաւոր՝ վախենալով համաժողովի ընթացքում զբօսաշրջիկների հոսքի գերծանրաբեռնուածութիւնից, միւսները խոստովանել են, որ արգելքի հրահանգ են ստացել իշխանութիւնների կողմից, իսկ մի մասը սպասում է իշխանութիւնների պատուէրի՝ իրենց առնչուող հատուածին:

Նման իրավիճակ է ստեղծուել բազմաթիւ մայրաքաղաքային հիւրանոցների դէպքում: Նրանք Նոյեմբերին (երբ տեղի կ'ունենայ համաժողովը) իրենց կայքերում նախնական պատուէրներ չեն ընդունում: Սակայն նոյն հիւրանոցներում COP29-ի համար նախատեսուած սենեակները կարելի է պատուիրել անմիջապէս կլիմայի կոնֆերանսի կազմակերպիչների կայքի միջոցով:

Նոյեմբերին հիւրանոցների ամրագրման միջազգային կայքը՝ booking.com-ն, առաջարկում է համարներ միայն մօտ 90 հիւրանոցում, մինչդեռ Հոկտեմբերի վերջին եւ Նոյեմբերի սկզբին մի քանի անգամ աւելի շատ հիւրանոցներ կան բազայում: Դա կարող է պայմանաւորուած լինել այն հանգամանքով, որ հիւրանոցները տեղ են յատկացնում կլիմայական կոնֆերանսի հիւրերին:

BBC-ն համաժողովի կազմակերպիչներին հարցում է ուղարկել, թէ արդեօք ռեստորաններին, հանդիսութիւններին սրահներին եւ հիւրանոցներին արգելուած է ընդունել ամրագրումներ համաժողովի ընթացքում, սակայն պատասխան չի ստացել:

Սահմանափակումները Պաքուի բնակիչներից շատերին չի շնորհիլ են համաճարակի շրջանը: Այն ժամանակ էլ արգելուած էին հարսանիքները, փակուած էին ռեստորանները, իսկ ուսանողներին ուղարկում էին հեռավար աշխատանքի կամ արձակուրդի:

Բնակիչութեան շրջանում խօսակցութիւններ կան, որ համաժողովի ընթացքում փողոց դուրս գալը թոյլատրուելու է օրական ընդամենը երկու ժամով, ինչպէս լոբդաուների ժամանակ է եղել: Ատրպեյճանը, ի դէպ, համաճարակի սկսուելուց աւելի քան չորս տարի անց դեռեւս փակ է պահում իր ցամաքային սահմանները՝ Covid-ի դէմ պայքարի պատրուակով:

Ատրպեյճանի բնակչութիւնը վաղուց սովոր է, որ իրենցից պահանջում են զոհաբերել ազատութիւնը եւ յարմարաւտութիւնը՝ յանուն երկրի հեղինակութեան: Ֆորմուլա 1-ի Գրան Պրիից շատ առաջ էլ քաղաքի կեդրոնը, որտեղ ընթանում էր մրցուղին, պարսպապատուել էր, եւ մարդիկ դժուարութեամբ էին կարողանում հասնել քաղաքի միւս ծայրը:

«Transparency International» միջազգային իրաւապաշտպան կազմակերպութիւնը, մինչդեռ, Ատրպեյճանում կլիմայական կոնֆերանսի անցկացումը «անյանգատացնող շահերի բախում» է անուանել: Իրաւապաշտպանները նշում են, որ երկիրը «կլիմայի նկատմամբ անբարեացակամ է», արդիւ-

Շար.ը էջ 19

Կղերա-Ֆեոտալական Բանակի Միջերը՝ Լեթայի Ջրերին

ՎԱՅՐԱՍ ԱԹԱՆԵՍԵԱՆ

Մամուլը, յղում կատարելով Հայ Առաքելական Եկեղեցու Արագածոտնի թեմին, գրում է Երիտասարդաց միութիւնների անդամների հետ Արցախի հերոս, գնդապետ Կարէն Զալաւեանի հանդիպման մասին: Հիւրը պատմել է դէպի Աստուած դարձի ճանապարհի, իր կեանքում եւ, առաւելաբար, ծառայութեան ընթացքում տեղի ունեցած Աստուծոյ հրաշքների, հաւատալու եւ աղօթելու, հայրենիքը սիրելու կարեւորութեան մասին եւ ամփոփել, որ «Ոչ ոք չի կարող յաղթել հաւատքով եւ աղօթող գինուորին»:

1946 թ. Խորհրդային գաղափարախօս Անդրէյ Ժդանովը Աննա Ախմատովայի մասին ասել է, որ չի հասկացուած՝ «անառակ է, թէ միանձնուհի»: Հիմա պարզ է՝ ԼՂՀ Պաշտպանութեան բանակում գնդապետ Զալաւեանը գործարանի հրամանատար-պրոֆէսիորնալ գինուորական է եղել, թէ «աբեղայ»:

Ովքեր եղել են դարաբաղատրպեյճանական գործերի շփման գծում, կը վկայեն, որ 2010-ական թուականներից դիրքերում բուռն «եկեղեցաշինութիւն» է սկսուել: Մարտական սպառազինութիւնը նոյնն էր մնացել, նոյնն էին խրամատները, խրամաբլիճները՝ հողափոր-ձեռնաչան:

Այդ տարիներին մի կատակախօս ասել է, որ Պաշտպանութեան բանակում «մարտավարութիւն չէ, արտավարութիւն է»: Բանակային «ֆէոտալիզմ» էր. Զորամասի հրամանատարն ունէր իր տնտեսութիւնը, հաւանաբար նաեւ գորա-

մասային կապելան, որը գինուորներին ներշնչում էր հաւատ առ այն, որ վտանգի պահին Աստուած նրանց չի լքի:

Հրամանատարութիւնը յրփանում էր, իսկ գորամասային կապելանը՝ գինուորներին համոզում, որ կարելի է յենակէտում յոյսը դնել մի ձեռքի գնդացրի, մի «կալաշնիկով» աւտօմատի եւ երկու նռնակի վրայ: Մնացածը «Աստուծոյ գործն է, նա կը փրկի»:

Հաւատացեալ է ՊԲ նախկին գորամասի նախկին հրամանատարը: Դա իր անձնական ընտրութիւնն է, կարող է մեկնել Երուսաղէմ: Բայց երիտասարդների հանդիպել եւ ասել, որ Աստուած իրեն փրկել է, փարիսեցիութիւն է, որովհետեւ Աստուած նրա հրամանատարութեան գինուորներից եւ սպաներից շատերին չի փրկել: Նրանք գոհուել են թէ ապրիլեան քառօրեայ մարտերում, թէ քառասունչորսօրեայ պատերազմում, թէ 2022 թ. Օգոստոսի 3-ին, թէ անցեալ տարուայ Սեպտեմբերի 19-ին:

Իսկ նողկալին այն է, որ գնդապետ Կարէն Զալաւեանը Երեւան է հասել աւելի վաղ, քան ցամաքած դիրքերից փրկարարները կը տարհանէին իր հրամանատարութեան գինուորները, սպաների մարմինները, կը կազմակերպուէր Եւրաբլուրում նրանց յուղարկաւորութիւնը: Զիտօսած այն մասին, որ մարտական փառքով պսակ-

ուած նրա տասնեակ գինուորները աճիւնները հողին են յանձնուել Ստեփանակերտում եւ դեռ այնտեղ են: Այդպէս դէպի Աստուած դարձ չի լինում: Այդպէս առհասարակ չի լինում եւ չպէտք է լինի:

Գնդապետ, Արցախի հերոս Զալաւեանին կարելի էր հասկանալ, եթէ նա ասէր, որ պատրաստ է մարտական փորձը փոխանցել Հայոց բանակին, յայտարարէր, որ կարող է ստանձնել հայ-ատրպեյճանական սահմանի ցանկացած հատուածի պաշտպանութիւնը: Մնացածը չեմ ասում: Անհասկանալի է, թէ նա ինչ օրինակ է ներշնչում: Կղերա-ֆեոտալական բանակի, ինչպէս դարաբաղային է ասում՝ «թթուն խմել ենք»:

Այդ «ֆենոմենը» ոչ միայն ակտուալ չէ, այլեւ չափազանց վտանգաւոր է՝ ինչպէս պատերազմի մասին հրաշապատում առասպելները: Եւ ինչո՞ւ է Հայ Առաքելական Եկեղեցին հովանաւորում դառը-դաժան իրականութեան միֆականացումը: Աւարայրի վարդանանք սրբադասուած են, բայց սրբերը «օգնական» են այնքանով, որ իրականութեանը չեն միջամտում: Ովքեր Աստուծոյ նուիրուելու ուխտ ունեն, կարող են մտնել մենաստան: Հայոց բանակը պէտք է շնչի շօշափելի-առարկայական միջավայրի սթափ եւ խորքային գնահատման ռեժիմում: Անցեալի միֆերը Լեթայի ջրերին են:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժնի հոն արտայայտուող բոլոր տեսակետները



ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԵՐԹ
ՊԼԵՏՏՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՅՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՅԷ ԱԶԱՊԱՅԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the **Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
<http://www.massisweekly.com>

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ԼՈՒՐԵՐ

Արեւմտամէտ Ուժերը Ստորագրահաւար Պիտի Սկսին՝ ԵՄ Անդամակցութեան Հանրաքուէ Կատարելու Պահանջով



Արեւմտամէտ ուժերու ներկայացուցիչները ասուլիսի ընթացքին

Արեւմտամէտ քաղաքական ուժերն ու քաղաքացիական հասարակութեան ներկայացուցիչները Սեպտեմբերէն պիտի սկսին ստորագրահաւար հաւաքը՝ Եւրոմիութեան անդամակցութեան համար հանրաքուէ կայացնելու պահանջով: Որպէսզի հարցը մտնէ Ազգային ժողով, անհրաժեշտ է առնուազն 50 հազար ստորագրութիւն:

«Հանրապետութիւն» կուսակցութեան նախագահ Արամ Սարգսեան Կիւմրիի մէջ տեղեկացուց, որ զուգահեռ նաեւ օրէնքի նախագիծին վրայ կ'աշխատին, որպէսզի թէ՛ Կեդրոնական Ընտրական Յանձնաժողովը (ԿԸՅ), թէ՛ խորհրդարանը մերժելու հիմքեր չունենան:

«Մեզ խօսակցութիւններ էին հասնում, որ իշխանութեանը բացարձակ ձեռնտու չի, որ մենք 50

հազար ստորագրութիւն հաւաքենք ու իրենք էլ մերժեն, դրա համար պէտք է յնարաւոր անել, որ ընդհանրապէս օրէնքը հէնց Կեդրոնական Ընտրական Յանձնաժողովից մերժուի, եւ իրենք էլ բարդութեան առաջ չկանգնեն: Դրա համար մենք առաւելագոյն անխոցելի ենք արել, ու դա մերժելու հնարաւորութիւն չկայ, ես կարծում եմ», - յայտնեց Արամ Սարգսեանը:

«Յանուն Հանրապետութեան» կուսակցութեան ղեկավար Արման Բաբաջանեանը կը կարծէ, որ իշխանական քաղաքական խումբին մէջ ալ այս հարցին շուրջ տարակարծութիւններ կան: Ամէն պարագային կ'ակնկալէ, որ հանրաքուէի առաջին ստորագրողներէն մէկը վարչապետ Փաշինեանը պիտի ըլլայ:

Հայաստանին Պիտի Տրամադրուի 200 Միլիոն ԱՄՆ Տոլարի Զափով Ներդրումային Վարկ «Քաջարանի Փապուղիի Երկաթուղու Շինարարութիւն» Ծրագրի Ֆինանսաւորման Համար



Գործադիրը հաւանութիւն տուած է 2024 թուականի Յուլիս 26-ին ստորագրուած «Հայաստանի Հանրապետութեան եւ Եւրասիական զարգացման դրամատան միջեւ Կայունացման եւ զարգացման եւրասիական հիմնադրամի միջոցներէն «Քաջարանի փապուղիի շինարարութիւն» ծրագրի ֆինանսաւորման համար ներդրումային վարկի տրամադրման մասին» համաձայնագիրը վաւերացնելու մասին» Հայաստանի Հանրապետութեան օրէնքի նախագիծին վերաբերեալ Հայաստանի Հանրապետութեան Կառավարութեան օրէնսդրական նախաձեռնութեան:

ՀՀ կառավարութեան Օգոստոսի 15-ի նիստին յայտարարուե-

ցաւ, որ համաձայնագրին համաձայն Կայունացման եւ զարգացման եւրասիական հիմնադրամի միջոցներէն Հայաստանի Հանրապետութեան պիտի տրամադրուի 200.000.000 (երկու հարիւր միլիոն) ԱՄՆ տոլարի չափով ներդրումային վարկ «Քաջարանի փապուղիի շինարարութիւն» ծրագրի ֆինանսաւորման համար: Ծրագրին նպատակն է «Հիւսիս-հարաւ» ճանապարհային միջանցքի հատուածին մէջ տարանցիկ փոխադրումներու ներուժի բարձրացումն ու վթարայնութեան նուազեցումը: Նախագիծով կը նախատեսուի իրականացնել Քաջարանի փա-

Շար.ը էջ 6

Բազրատ Սրբազանը Փաշինեանի Հեռացման Համար Նոր Ժամկէտ Սահմանած Է

Վարչապետի հրաժարականին հասնելու համար պայքարի ելած Բազրատ սրբազանը Նիկոլ Փաշինեանի հեռացման համար հիմա նոր ժամկէտ սահմանած է՝ Սեպտեմբերը:

«Սեպտեմբերին տեղի է ունենայու այն, ինչ Մայիսի 9-ին հարիւր հազարաւոր մարդկանց մտքերի մէջ կար», - յայտնեց Բազրատ Գալստեանը:

Վերջին երկու ամսուան մէջ մարզային եւ բազմաթիւ այցերով զբաղուած շարժման առաջնորդը կը պնդէ, թէ իրենք պատրաստուած են անոր, բայց մանրամասնութիւններ դարձեալ չի յայտնէ:

«Մեզ համար վճռական կարեւոր օրեր են մեր դիմաց: Մենք նախապատրաստուելով բոլոր առումներով առաջ ենք դնալու», - յայտնեց Բազրատ սրբազանը:

Բարձրաստիճան հոգեւորականը պայքարը սկսաւ գարնան՝ Տաւուշի հատուածական սահմանազատման օրերուն. նախ կը պնդէր, թէ իրենց պայքարը սահմանա-



Յայտնած շարժումի ղեկավար՝ Բազրատ սրբազան

զատման քօղի ներքոյ իրականացուած գործընթացին դէմ է, սակայն քայլեր թելով Երեւանի հասնելուն պէս բազմամարդ հանրահաւքին յայտարարեց՝ գլխաւոր նպատակը Փաշինեանի հեռացումն է:

Դաւիթ Տօնոյեան Կալանքէն Ազատ Արձակուեցաւ

ՀՀ պաշտպանութեան նախկին նախարար Դաւիթ Տօնոյեանը դուրս եկած է ԱԱԾ մեկուսարանէն, անոր խափանման միջոցը փոխելու համար 15 միլիոն դրամ գրաւը վճարուած է:

Ան լրագրողներու հետ կարճ զրոյց ունեցած է ու նշել, որ կը պատրաստուի ոտքով տուն երթալ:

«Օտ է տունը, ընդամենը 500 մեթր է», - ըսած է Տօնոյեան:

Յիշեցնենք՝ Դաւիթ Տօնոյեանը կայանքի տակ էր շուրջ երեք տարիէ՝ 2021 թուականի Սեպտեմբեր 30-էն: Դաւիթ Տօնոյեանը եւ Դաւիթ Գալստեանը (Պատրոն Դաւօ), ըստ ԱԱԾ հաղորդագրութեան, կը կասկածուին աւելի քան 2,2 միլիոն դրամ յափշտակելու, կեղծիքներ կատարելու համար:

Քրէական գործը ռազմամթերքի ձեռքբերման գործընթացին մէջ ենթադրեալ շարաշահումներու, մասնաւորապէս՝ անորակ, ոչ-պիտանի հրթիռներ ձեռք բերելու վերաբերեալ է:

Գործի շրջանակներուն մէջ մեղադրանք առաջադրուած է 7



Պաշտպանութեան նախկին նախարար Դաւիթ Տօնոյեան

անձի, այդ շարքին՝ նախկին նախարար Դաւիթ Տօնոյեանին, ՀՀ Զինուած Ուժերու Գլխաւոր Շտաբի պետ Արտակ Դաւթեանին, ԶՈՒ ԳՇ պետի նախկին տեղակալ Ստեփան Գալստեանին, «Պատրոն Դաւօ» ծածկանունով յայտնի՝ գէնքի մատակարարմամբ զբաղող գործարար Դաւիթ Գալստեանին:

Մեր Սօս Մրցակցային Դաշտը Խաթարուած Է ՊԵԿ Նախագահ Ռուստամ Բադասեան

Եթէ պետական մարմինի նկատմամբ քննադատութիւն կ'ըլլայ, պէտք է հասկնանք, թէ ատիկա ինչքանով մերկապարանոց է, ինչքանով՝ ոչ:

Կառավարութեան նիստէն յետոյ լրագրողներու հետ զրոյցին, անդրադառնալով Վահրամ Միրաքեանի յայտարարութիւններուն, այս մասին ըսաւ ՊԵԿ նախագահ Ռուստամ Բադասեանը:

«ՊԵԿ-ում շուտով հասարակական խորհրդի նիստ է լինելու, որտեղ քննարկուած ենք ունենալու առեւտուրի ներկայացուցիչներին հետ: Հիմա Քրէական օրէնսդրութեան յայտարարութիւններուն կայ, որը չի համարուում լաւ փորձ: Ասուած է, որ եթէ հարկային յանցագործութիւնը հաստատուի, կը բերեն, կը վերականգնեն գումարը եւ կ'ազատուեն քրէական պատասխանատուութիւ-

նից: Իմ կարծիքով՝ այս յօդուածի պատճառով մեզ մօտ մրցակցային դաշտը խաթարուած է: Օրինակ՝ նոյն շուկայում գործում են նոյն տնտեսվարողները, մէկը պարտաճանաչ վճարում է հարկերը, իսկ միւսը խուսափում է: ՊԵԿ-ը ինչ-որ պահի դա յայտնաբերում է, փոխհատուցում գումարը եւ ազատում քրէական պատասխանատուութիւնից: Իսկ սա որքանով է արդարացի պարտաճանաչ հարկ վճարողի հանդէպ», - նշեց ան:

Յիշեցնենք, որ «Մանթաշեանց» գործարարներու միութեան համահիմնադիր եւ նախագահ Վահրամ Միրաքեանը յայտարարութիւն տարածած էր, ուր կ'ըսէր, որ ՊԵԿ-ը նախաձեռնած է օրէնսդրական առաջարկ, որով կը նախատեսէ Հայաստանի մէջ տարին մօտ հազար գործարար բանտ նստեցնել:

ԼՈՒՐԵՐ

Ատրպեյճան Այցեյ Յետոյ Պիտի Կապուիմ Վարչապետ Փաշինեանի Յետ Եւ Պատմեմ Անոր Սեր Բանակցութիւններու Մասին. Ըսած Է Փութին



Ռուսաստանի եւ Ատրպեյճանի նախագահներու հանդիպումը Պաքուի մէջ

Ռուսաստանի Դաշնութեան եւ Ատրպեյճանի նախագահներ Վլադիմիր Փութինը եւ Իլհամ Ալիեւը ունեցած են ռուս-ատրպեյճանական բանակցութիւններ նեղ ձեւաչափով:

Երկու ղեկավարներու կարծելոյթներէն յետոյ գրոյցը շարունակուած է փակ դռներու ետին:

«Ես շատ ուրախ եմ Պաքու գտնուելու, եւս մէկ անգամ այս քաղաքով հիանալու համար», - նշած է Ռուսաստանի ղեկավարը պետական այցի ժամանակ իր ատրպեյճանցի գործընկեր Իլհամ Ալիեւի հետ բանակցութիւններուն սկիզբը:

Փութին նշած է, որ Ատրպեյճանի նախագահը եւ անոր կինը՝ Մեհրիպանը, մեծ ուշադրութիւն կը դարձնեն Պաքուի զարգացման: ՌԴ նախագահը նաեւ յայտնած է, որ Ատրպեյճան այցէն յետոյ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանին պիտի պատմէ Ատրպեյճանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ բանակցութիւններու արդիւնքներուն մասին: «Ի հարկէ, Ատրպեյճան այցէն յետոյ ես պիտի կապուիմ վարչապետ Փաշինեանի հետ եւ պատմեմ անոր մեր բանակցութիւններու արդիւնքներուն մասին», - խոստացած է Փութինը:

Ռուսաստանը ուրախ պիտի ըլլայ, եթէ կարենայ ինչ-որ բան ընել

խաղաղութեան պայմանագրի ստորագրման եւ Հայաստանի ու Ատրպեյճանի միջեւ սահմանազատման համար, ըսած է ՌԴ նախագահը:

Մոսկվան պատրաստ է մասնակցելու Պաքուի եւ Երեւանի միջեւ յարաբերութիւններու կարգաւորման այն մասով, որ պիտի պահանջուի երկու կողմերէն: Այս մասին յայտնած է ՌԴ նախագահ Վլադիմիր Փութինը Ատրպեյճանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ նեղ ձեւաչափով բանակցութիւններու ժամանակ:

«Ռուսաստանի պատմական ներգրաւուածութիւնը Հարաւային Կովկասի մէջ, ընդ որում՝ վերջին տարիներուն, մեզ կը թելադրէ այդ իրադարձութիւններուն մասնակցելու անհրաժեշտութիւնը, ի հարկէ, այն մասով, որով այդ պիտի պահանջուի կողմերէն: Եթէ մենք կարենանք ինչ-որ բան ընել, որպէսզի հասնինք խաղաղութեան համաձայնագրի ստորագրման, գործը հասցենք մինչեւ սահմանազատման եւ սահմանագծման, ապա արգելափակենք լոկալիզմի եւ տնտեսութեան համապատասխան ուղղութիւնները, մենք շատ ուրախ պիտի ըլլանք անոր համար», - ըսած է Փութինը Ատրպեյճանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ բանակցութիւններուն ժամանակ:

Եկեք Չմոռնանք Իրենց Յողէն Վտարուած Լեռնային Ղարաբաղի Յայերուն Մասին. ՅՅ-ի Մէջ Ֆրանսայի Դեսպան

Հայաստանի մէջ Ֆրանսայի արտակարգ եւ լիազօր դեսպան Օլիվիէ Տըքոթինյին կրկին յիշեցուցած է հայերուն՝ Լեռնային Ղարաբաղ վերադառնալու իրաւունքին մասին:

«Եկէք չմոռնանք իրենց հողէն վտարուած Լեռնային Ղարաբաղի հայերուն մասին, որոնց վերադարձի իրաւունքը հաստատած է Արդարադատութեան միջազգային դատարանը», - գրած է ան ընկերային ցանցերուն մէջ:

Փութինի Այցեյ Յետոյ Ատրպեյճանը Սկսած Է Կեղծ Ու Սադրիչ Լուրեր Տարածել Սահմանային Իրադրութեան Մասին

Առնուազն միամտութիւն պիտի ըլլայ ենթադրել, թէ պատահականութիւն է, որ Փութինի այցէն յետոյ ատրպեյճանական կողմը սկսած է կեղծ ու սադրիչ լուրեր տարածել Հայաստանի հետ սահմանային իրադրութեան մասին:

Նախօրէից Ատրպեյճանի Պաշտպանութեան նախարարութիւնը կեղծ լուրեր կը տարածէ, թէ ՀՀ Ձիւնուած Ուժերու ստորաբաժանները կրակ բացած են սահմանագծի հատուածին տեղակայուած ատրպեյճանական դիրքերու ուղղութեամբ, ինչին արձագանգած է ՀՀ ՊՆ-ն՝ հերքելով ատրպեյճանական կողմի տարածած ապատեղեկատուութիւնը:

Ուշագրաւ է, որ տեւական դադարէ յետոյ ատրպեյճանական կողմը սկսաւ կեղծ ու սադրիչ լուրեր տարածել այն բանէն յետոյ, երբ Ռուսաստանի նախագահ Փութինը պաշտօնական այցով այցելեց Պաքու:

ԱԳՆ-Ը Կը Յայտարարէ «Երեւան Երկխօսութիւն» Միջազգային Յամաժողովի Կայացման Մասին



ՀՀ Արտաքին գործերու նախարարութիւնը կը յայտարարէ, որ Սեպտեմբեր 9-11-ին Երեւանի մէջ առաջին անգամ ըլլալով տեղի պիտի ունենայ «Երեւան Երկխօսութիւն» միջազգային համաժողովը:

Արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեան նշած է. «Աշխարհն արագօրէն փոխուած է մեր աչքի առաջ: Բոլոր փոփոխութիւնները ցոյց են տալիս, որ ամուր, համախոհ դերակատարների հետ եւ արժէքների վրայ հիմն-

ուած գործընկերութիւնն աւելի էական է, քան երբեք: Անցկացուելով առաջին անգամ՝ «Երեւանի Երկխօսութիւնը» կ'ապահովի կարեւոր հարթակ՝ հնչեցնելու թիրախային հարցեր, տարբերակող կարծիքներ եւ համադրող պատասխաններ՝ ապագան կառուցելու աշար:»

Ըստ հաղորդագրութեան՝ համաժողովը տեղի պիտի ունենայ հնդկական առաջատար ուղեղային կեդրոն Observer Research Foundation-ի հետ:

ԱՄՆ Պատրաստ Է Աշխատելու Ատրպեյճանի Ու Յայաստանի Յետ Որեւէ Ձեւաչափով

Միացեալ Նահանգները պատրաստ է աշխատելու Ատրպեյճանի ու Հայաստանի հետ որեւէ ձեւաչափով, որուն կը համաձայնին կողմերը եւ ուր վերջիններս կրնան յառաջընթաց արձանագրել, յայտարարած է ԱՄՆ Պետական Քարտուղարութիւնը՝ ի պատասխան «Ամերիկայի Ձայն»-ի հայկական ծառայութեան հարցումին՝ կապուած ԵԱՀԿ Մինսքի խումբի ձեւաչափի ապագային եւ անոր շուրջ ամերիկեան կողմի դիրքորոշման հետ:

«Միացեալ Նահանգներու կառավարութիւնը կ'աջակցի Հայաստանի եւ Ատրպեյճանի ջանքերուն՝ հասնելու կայուն եւ արժանապատիւ խաղաղութեան համաձայնագրին: Մենք պատրաստ ենք աշխա-

տելու երկու կողմին հետ որեւէ ձեւաչափով, որուն շուրջ կողմերը կրնան գալ համաձայնութեան եւ ուր կրնան յառաջընթաց արձանագրել», - յայտնած են ԱՄՆ Պետական Քարտուղարութեան:

Պաքուէն պարբերաբար կը հնչէ Մինսքի խումբը լուծարելու պահանջ. Հայաստանէն ակնկալուող քայլերուն մէջ Ատրպեյճանի նախագահը, Յուլիսի վերջաւորութեան, Սահմանադրութեան փոփոխութեան քայլի նաեւ Մինսքի խումբը համատեղ լուծարելու պահանջ դրած էր: Պաշտօնական Երեւանն ալ օրերս յայտարարեց, որ հայկական կողմը Մինսքի գործընթացի շարունակականութեան հարցը կրնայ դիտարկել առաջին հերթին՝ խաղաղութեան պայմանագրի կնքման ծիրին մէջ:

Մինսքի Խումբի Յարցը Կրնայ Դիտարկուիլ Խաղաղութեան Պայմանագրի Ծիրին Մէջ. ԱԳՆ

Երեւանը Մինսքի գործընթացի շարունակականութեան հարցը կրնայ դիտարկել առաջին հերթին խաղաղութեան պայմանագրի կնքման ծիրին մէջ:

«Ազատութեան» հարցումին ի պատասխան այս մասին յայտնած են Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչութեան:

«Ազատութիւն»-ը մասնաւորապէս հետաքրքրուած է Արտաքին գործերու նախարարութեան արդեօք Ատրպեյճանը Մինսքի խումբի լուծարումը կը դարձնէ՞ նախապայման՝ խաղաղութեան պայմանագրի ստորագրելու համար, ինչո՞ւ Երեւանը համաձայն չէ լուծարման, եւ հնարաւոր է, որ յառաջիկային Հայաստանը մտքափոխուի եւ Պաքուի հետ

լուծարման համատեղ դիմումներ կայացնէ ԵԱՀԿ-ին:

Արտաքին գործերու նախարարութիւնը այս հարցումներուն մէջ նախադասութեամբ պատասխանած է. «Հայկական կողմը Մինսքի գործընթացի շարունակականութեան հարցը կարող է դիտարկել յարաբերութիւնների համապարփակ կարգաւորման եւ առաջին հերթին խաղաղութեան պայմանագրի կնքման ծիրին մէջ»:

Նշենք, որ Ատրպեյճանը խաղաղութեան համաձայնագրի ստորագրման, անոր նախաստորագրման համար պահանջած է փոխել Հայաստանի Սահմանադրութիւնը եւ համատեղ լուծարել ԵԱՀԿ Մինսքի խումբը: Ալիեւ նաեւ յայտնած է, որ Հայաստանը համաձայն չէ Մինսքի խումբի լուծարման:

Հայաստանը Մեծապես Կը Կարելորէ Հնդկաստանի Հետ Համագործակցութեան Զարգացումը. Վահագն Խաչատուրեան

Հայաստանի նախագահ Վահագն Խաչատուրեանը շնորհալուրական ուղերձ յղած է Հնդկաստանի Հանրապետութեան նախագահ Տրուփալաքի Մուրմուրին Անկախութեան օրուան առիթով:

«Անկախութեան օրուան շնորհիւ Հնդկաստանը հասել է տպաւորիչ արդիւնքների՝ կառուցելով ժողովրդավարական պետութիւն, ապահովելով շարունակական տնտեսական աճ եւ զիտութեան արդիականացում, գրանցելով առաջընթաց տարբեր բնագաւառներում: Համոզուած եմ, որ ներկայումս միջազգային ասպարէզում Հնդկաստանի ստանձնած պատասխանատու դերը կը ծառայի ի նպաստ համընդհանուր կայունութեան եւ հաւասարակշռութեան:

«Հայաստանը մեծապէս կարեւորում է Հնդկաստանի հետ բազմոլորտ համագործակցութեան հետեւողական զարգացումը:

«Լիալոյս եմ, որ մեր երկրները միջեւ ընդհանուր արժէքների, փոխադարձ յարգանքի եւ վստահ-



Հայաստանի նախագահ Վահագն Խաչատուրեան

հուստեան վրայ հիմնուած բարեկամական յարաբերութիւնները հետագայում առաւել կը խորանան եւ կ'ամրապնդուեն՝ ի շահ մեր ժողովուրդներին»,- մասնաւորապէս կ'ըսուի նախագահ Վահագն Խաչատուրեանի ուղերձին մէջ:


Հայոց Պատմութեան Նոր Դասագիրքին Մէջ Հայաստանի Միացումը Ռուսական Կայսրութեան Որպէս «Բռնակցում» Զեւակերպումը Պիտի Փոխուի. ԿԳՄՍՆ

«Հայոց պատմութեան» 8-րդ դասարանի դասագիրքին հետ կապուած եղած են որոշ անհանգստութիւններ ու մտահոգութիւններ թեմաներու վերնազրեւին մէկուկու մէջ «բռնակցում» բառը օգտագործելու վերաբերեալ: Լրագրողներու հետ զրոյցին այդ մասին ըսաւ ԿԳՄՍ նախարարութեան Հանրակրթութեան վարչութեան պետ Թամարա Սարգսեանը:

«Ստացել ենք տարբեր անհանգստութիւններ արտայայտող ահագանգեր, որից յետոյ հեղինակային խմբի հետ աշխատանք է իրականացուել, առաջարկուել է վերանայել այդ մօտեցումը, արդիւնքում հեղինակային խումբը վերնազրիւ վերանայել է եւ համապատասխանեցրել այն ձեւակերպումներին, որը ունենք «Հայոց պատմութիւն» առարկայի առարկայական ծրագրում: Այս պահին դասագրքի խմբագրուած տարբերակն ուղարկուել է ԴՇՀ, որից յետոյ փոփոխուած տարբերակը կը տեղադրվի կայքում եւ կ'ուղարկուի տպագրման», - ըսաւ ան:

Հարցումին՝ տեղի ունեցածը վրիպուած էր, վարչութեան պետը ըսաւ.

«Սա ոչ այդքան վրիպում էր, այդ տեսանկիւնից գուցէ չէին դիտարկել հարցը: Մենք շատ կարեւոր կարգաւորում ունենք, դասագիրքը երաշխաւորելուց յետոյ տեղադրուել է նախարարութեան պաշարների շտեմարանում կամ ԴՇՀ-ի կայքում, տրուել է երկու շաբաթ ժամանակ, որպէսզի դասագիրքը օգտագործող ուսուցիչները, ծնողները, հասարակութիւնը կարողանան ծանօթանալ դասագրքերի հետ: Սա մեզ հնարաւորութիւն է տալիս լրացուցիչ աչք ունենալ, եւ եթէ կան



որոշ վրիպումներ, վերանայել՝ մինչեւ տպագրութեան գնալը», - ըսաւ Սարգսեանը:

Վերջինս ընդգծեց, որ հիմնական բողոքները կապուած էին վերնազրիւ հետ, ոչ թէ բովանդակութեան, քանի որ բովանդակութեան մէջ արտայայտուած են այն իրադարձութիւնները, որոնք յաջորդաբար տեղի ունեցած են 19-րդ դարուն:

Մոսկուան յոյս յայտնած է, որ Հայաստանի իշխանութիւնները թոյլ չեն տար դպրոցներ տեղափոխել ութերորդ դասարանի պատմութեան դասագիրքը, որ կը խեղաթիւրէ 18-րդ դարավերջի եւ 19-րդ դարասկիզբի Հարաւային Կովկասի իրադարձութիւնները: Անոր մասին կ'ըսուի Ռուսաստանի Դաշնութեան Արտաքին գործերու նախարարութեան հաղորդագրութեան մէջ:

Գերատեսչութեան մէջ պարզաբանած են, որ սոյն դասագիրքի գլուխներէն մէկուն մէջ «Արեւելեան Հայաստանի բռնի միացումը Ռուսաստանին» սաղորիչ վերնագրով վերանայուած են

Ռազմական Ակադեմիայի Պատուիրակուիւնը Արցելած Է Միացեալ Նահանգներ



ՀՀ Պաշտպանութեան նախարարութեան պատուիրակութեան հանդիպումը ԱՄՆ-ի բանակի ներկայացուցիչներուն հետ

Պաշտպանութեան նախարարութեան Վազգէն Սարգսեանի անուան ռազմական ակադեմիայի պատուիրակութիւնը ակադեմիայի պետ, գնդապետ Արսէն Մանկասարեանի գլխաւորութեամբ ճանաչողական այցեր կատարած է ԱՄՆ ռազմաուսումնական հաստատութիւններ:

Պատուիրակութիւնը եղած է Ֆորտ Մուրի ԱՄՆ բանակի մարտական հմտութիւններու ուսուցման ու գերազանցութեան կեդրոնին եւ Ֆորտ Լեւենվորթի՝ ԱՄՆ բանակի հրամանատարաշտաբային քոլեճին մէջ, ծանօթացած է հաս-

տատութիւններու ծրագրերուն, ուսումնական գործընթացի կազմակերպման առանձնաչափութիւններուն եւ հետեւած է դաշտային վարժանքներուն:

Հայկական կողմը ամերիկեան գործընկերներուն հետ քննարկած է հետագայ համագործակցութեան հարցեր:


Միացեալ Նահանգները յատարարած է, որ մտադիր է աջակցիլ Հայաստանին անվտանգութեան ոլորտի կառավարման բարելաւման հարցով, որն ալ, իր հերթին, պիտի նպաստէ հայ-ամերիկեան յարաբերութիւններու ամրապնդման:

Մեկնարկած Են Հայաստանի Մէջ 5G Լայնաշերտ Ցանցի Ներդրման Աշխատանքները

ՀՀ Բարձր արհեստագիտական արդիւնաբերութեան նախարարութիւնը ազատականացած է 3600-3800 ՄՀց ռադիօյաճախականութիւններու տիրոջթը՝ առեւտրային նպատակներով տրամադրելու համար:

Հայաստանի մէջ յառաջիկային 5G արհեստագիտական լայնաշերտ ցանցի ներդրման վերաբերեալ Ite.am-ի հարցումին ի պատասխան՝ ՀՀ բարձր արհեստագիտական արդիւնաբերութեան նախարար Մխիթար Հայրապետեան նշած է, որ ռադիօյաճախականութիւններու տիրոջթը ազատականացնելէ յետոյ Հանրային ծառայութիւնները կարգաւորող յանձնաժողովը կ'իրականացնէ 3600-3800ՄՀց ռադիօյաճախականութիւններու տիրոջթէն հատուածներու տրամադրման մրցութային փաթեթի եւ պայմաններու, ինչպէս նաեւ հանրային շարժական 5G արհեստագիտութեան լայնաշերտ կապի որակի չափանիշներու մշակման գործընթաց, որ կը նախատեսուի քննարկել նախարարութեան հետ:

«Քննարկումներից յետոյ Հանրային ծառայութիւնները կարգաւորող յանձնաժողովը կը յայտարարի մրցոյթ: Եթէ ՀՀ շարժական կապի աշխատողները մասնակցեն մրցոյթին եւ ռադիօյաճախականութիւնների տիրոջթից հատուածներ ձեռք բերեն, աշխատողները կ'իրականացնեն մրցոյթային փաթեթի պայման-



ներով սահմանուած ժամկէտներում եւ վայրերում 5G արհեստագիտական լայնաշերտ ցանցի ներդրման եւ շահագործման աշխատանքները: Այս պարագայում Հայաստանը կ'ունենայ 5G արհեստագիտական լայնաշերտ ցանցի հասանելիութիւն:

«Բարձր արհեստագիտական արդիւնաբերութեան նախարարութիւնը Հայաստանի շարժական կապի աշխատողների հետ կազմակերպել է առանձին հանդիպումներ, որտեղ քննարկուել են 5G արհեստագիտութեան ցանցերի ներդրման հարցերը, մասնաւորապէս՝ վերջիններիս պատրաստակամութիւնն ու հետաքրքրուածութիւնը մրցոյթին մասնակցելու եւ վերոնշեալ աշխատանքներն իրականացնելու համար», - նշած է նախարարը:

1826-1828 թուականներին ռուսպարսկական պատերազմի արդիւնքներուն գնահատականները,

եւ թուրքմանչայի խաղաղութիւնը կոչուած է Արեւելեան Հայաստանի «բռնակցումը»:

Քաղաքական Նշմարներ

Բարունակ: Բարեկամ Մամուլ էլ ինչպէ՞ս ես Մամուլ էլ: լաւ եմ դուն ինչպէ՞ս ես

Բարունակ: լաւ եմ բայց շուտաւ եմ, ինչպէ՞ս բացատրենք, անցեալ տարի Հոկտեմբեր 7-ին ՀԱՄԱՍ-ի «Աքսայի Փոթորիկը» կոչուող ռազմական գործողութիւնը եւ իսրայէլացի քաղաքացիներու ու զինուորականներու արեւանգումը, որուն դէմ իսրայէլ ռազմական լայնածաւալ գործողութիւն մը սկսաւ՝ ազատագրելու «գերիները»: Պատերազմը մինչեւ այսօր կը շարունակուի, ոչ ՀԱՄԱՍ կը ցաւ իսրայէլի բանտերուն մէջ գտնուող իր անդամները փոխանակել «պատանդներուն» դիմաց, ոչ ալ իսրայէլ կը ցաւ վերադարձնել ՀԱՄԱՍ-ի մօտ գտնուող «գերիները»: Ղազախի հատուածը ամբողջութեամբ կործանուած է, միլիոնաւոր մարդ ծայրահեղ թշուառութեան մէջ կ'ապրին, 40.000- է աւելի զոհ կայ, որոնց մեծ մասը կիներ ու երեխաներ են, իսրայէլ ամեն օր նոր ոճիրներ կը գործէ: Իսկ միւս կողմէն Իրան՝ իր ամբողջ կողմնակիցներով միւրճուած է պատերազմին մէջ:

Մամուլ էլ: Իմ բարի ընկեր սիրելի Բարունակ. Իմ կարծիքովս 1- «Աքսայի Փոթորիկը» գործողութիւնը որուն հեղինակը Եհսեա Ալ-Սընուարն էր, լարուած ծուղակ մըն էր ՀԱՄԱՍ-ին, պատահածը անտարբերանակալ դէպք մըն էր, մասնաւոր երբ այսօր կը տեսնենք իսրայէլի յետախուզական եւ արհեստագիտական կարողութիւնները:

2- Իսրայէլի քարոզչութիւնը յաջողեցաւ այդ գործողութիւնը, որպէս պատրուակ ծառայեցնելու Ղազախի «մաքրելու» եւ ՀԱՄԱՍ-ի ղեկավարները սպաննելու՝ բացի Եհսեա Ալ-Սընուարէն, որ «Աքսայի Փոթորիկը» գործողութեան հեղինակն ու ղեկավարն էր: Հոս երկու մեծ հարցման նշաններ կը նշմարեմ:

Ա.- Իսրայէլ ինչպէ՞ս Թէհրանի մէջ գտաւ եւ սպաննեց խիստ պաշտպանուած Հանիյէյին, իսկ ժողովուրդին մէջ պտտող Սընուարին չի գտաւ ...:

Բ.- Հանիյէյի սպաննութեան յաջորդ օրը իսրայէլի համար գլխաւոր թիրախ հանդիսացող Ղազախի փլատակներուն մէջ «Թաքնուած» Ալ-Սընուարը ընտրուեցաւ ՀԱՄԱՍ-ի ղեկավար:

3- Իրան Տարածաշրջանային պետութիւն է, իր ազդեցութեան տակ արած է Լիբանանը, Սուրիան, Եմենը եւ Իրաքը: Գաղտնիք չէ, Իրանի ծաւալումը կը հակասէ ԱՄՆ-ի եւ իսրայէլի կենսական շահերուն:

Ուրեմն իմ բարի ընկեր Բարունակ այս բոլոր դաւադրութիւնները նոյն մոլթ սատանայական ատեաններէն կ'ելեն, ուր որոշուեցան եւ գործադրուեցան բոլոր մարդկութեան դէմ ոճիրները, սկսեալ Հայոց Յեղասպանութենէն մինչեւ այսօրուայ ջեղասպանութիւնները: Այդ մոլթ սանեակներուն մէջ նստած, մարդու կերպարանք ունեցող երկոտանիները Աստուծոյ պատուիրաններով կը խօսին, բայց անոնց տէրը ոսկին է, եղբայրութեան մասին կը ճառեն բայց մարդկային դիակներով կը սնուին, եւ ժողովուրդներ թշուառացնելով կը գուարճանան:

Մենք Պաղեստինի ժողովուրդին պետութիւն ունենալու արդար իրաւունքին հետ ենք. Պաղեստինի ժողովուրդի օրինական ներկայացուցիչը «Պաղեստինի Ազատագրութեան Կազմակերպութիւնն» է. Մենք կը դատապարտենք իսրայէլական բանակի կատարած բոլոր չ'արդարացուած ոճիրները եւ գաւթիչ գործողութիւնները:

Ալիւսի վարչակարգը ապարդիւն կը փորձէ իր սեւ երեսը ճերմկցնել

Բարունակ: Բարեկամ Մամուլ էլ ինչպէ՞ս ես Մամուլ էլ: լաւ եմ դուն ինչպէ՞ս ես

Բարունակ: Մամո աս COP29-ը ինչ է, Հայաստանն ալ հրաւիրուած է եղեր:

Մամուլ էլ: COP29-ը Միւսկոլումի Ազգերու Կազմակերպութեան կլիմայի փոփոխութեան 29-րդ համաժողովն է: COP29-ը տեղի պիտի ունենայ Ատրպէյճանի մայրաքաղաք Պաքուի մէջ, այս տարուայ 11 - 22 Նոյեմբերին: Այո ես ալ տեղ մը նշմարեցի, որ Հայաստանին ալ հրաւէր կայ:

Ատր մասին շատ հետաքրքիր յօդուած մը կարդացի POLITICO-ին մէջ: Գլխաւոր մասերը թարգմանենք մեր հանրութեան համար: Յայտնի պարբերականը շարք մը վերապահութիւններ եւ կասկածներ կը յայտնէ այս համաժողովին յաջողութեան վերաբերեալ, որոնցմէ մէկը «Ատրպէյճանական անհանգստութիւն» կ'անուանէ, «...բոլորն ալ համոզուած չեն, որ Ատրպէյճան կրնայ որակեալ համաժողով մը վերահսկել»:

Ամերիկացի գործարար մը, ով մասնակցած է նախորդ COP-երուն ըսած է, որ. «Երկիրը (Ատրպէյճան) իր տնտեսութիւնը աշխատեցնելու համար մեծապէս կախուածութիւն ունի նաւթի եւ կազի եկամուտներէն, այնինչ մտահոգութիւններ կը յառաջացնէ մասնակից ընկերութիւններու մօտ, թէ անոնք կապուած կրնան ըլլալ կենսոլորտային խաբեբայութեամբ (greenwashing):»

POLITICO կը գրէ, որ Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիւսի յստակ յայտարարած է, թէ «Իրենց նման նաւթ եւ կազ արդիւնահասնող երկիրները, պէտք է շարունակեն ներդրումներ կատարել այդ ոլորտին մէջ», հակասելով անցեալ տարուայ Միացեալ Արաբական Էմիրութիւններու մէջ տեղի ունեցած COP28-ի եզրակացութիւններուն, ուր բոլոր մասնակիցները կոչ ըրած էին արագ հեռանալու հանածոյ վառելանյութերէն:

Ուժանիւթի ոլորտին մէջ աշխատող Bracewell's Policy Resolution Group-ի բաժնետէր՝ Ֆրանք Մաիսանոն ըսած է «Մարդիկ, վստահութիւն



Ի՞նչու Դժգոհ են Լաւրովն ու Լուքաշենքոն

Շարունակուած էք է-էն

Երեւան միշտ ալ յայտարարած է, որ պատրաստ է ճանապարհները բանալու, սակայն չի կրնար զիջիլ իր ինքնիշխանութիւնը որեւէ այլ երկրի: Պաքուի եւ Մոսկուայի ծրագիրը այն է, որ Հայաստան Չանգեզուրի վրայով անարգել ճանապարհ տրամադրէ դէպի Նախիջեւան եւ այդ անցքը հսկուի Ռուսաստանի կողմէ: Ըստ երեւոյթի, Լաւրովին անհաճութեամբ է «Չանգեզուրի միջանցքի» իր պահանջն, այդպիսով ծախողութեան մատուցելու մասին Ռուսաստանի ծրագիրները: Այն երկիրը, որ հակառակ իր ստանձնած յանձնարարութեան Լաչինի միջանցքը յանձնեց Ատրպէյճանին, պէտք չէ ակնկալէ, որ մէկ այլ միջանցք, այս անգամ բուն Հայաստանի հողին վրայ, վստահուի իրեն:

Հայաստանի վարած արտաքին քաղաքականութեան նկատմամբ դժգոհութիւն յայտնած է Լաւրովն Ռուսաստանի հետ միութեան կանգնելու կազմած Պելաճուսիոյ նախագահ Ալեքսանտր Լուքաշենքոն, ըսելով թէ, «Որո՞ւն պէտք են հայերը՝ բացի մեզմէ, թող

անոնք զարգացնեն իրենց տնտեսութիւնը, ի՞նչ Ֆրանսա, ի՞նչ Մաքրոն, Մաքրոնը վաղը չ'ըլլար՝ բոլորը կը մոռնան Հայաստանի մասին»: Նոյն Լուքաշենքոն էր, որ տարիներ առաջ վստահօրէն կը յայտարարէր, որ «Նիկոլը երթալիք տեղ չունի, բացի միութեան կանգնելու»: Ինչպէս որ ան սխալեցաւ իր անցեալի յոխորտանքին մէջ, ան կը սխալի մասնաւոր: Հայաստան ոչ միայն գտաւ երթալիք տեղ, այլ եւ շատ մը յառաջադէմ ու ժողովրդավար երկիրներ այսօր Հայաստանի կողքին են ու կ'աջակցին անոր՝ տնտեսապէս ու ռազմական գետնի վրայ:

Հայութիւնը պէտք չունի Ատրպէյճանի յաթանակներով ուրախացող Լուքաշենքոյին ու իր սնանկութեան: Երեւան այժմ կը վարէ անկախ արտաքին քաղաքականութիւն, եւ պէտք ունենալով միմիայն իր ազգային շահերը: Անոնք որոնք դժգոհութիւն ունին այս հարցով, պէտք է փոխեն ո՛չ միայն Հայաստանի նկատմամբ իրենց վերաբերմունքը, այլ եւ՝ իրենց վիրաւորական հռետորաբանութիւնը:

Գ. ԽՈՏԱՆԵԱՆ «ՄԱՍԻՍ»

Հայաստան Կոչ Կ'ընէ Ռուսաստանին

Շարունակուած էք է-էն

տանը որեւէ այլ պայմանաւորուածութեան մաս չի կազմում, հետեւաբար չի կարող սաբոտաժի ենթարկել դրանք:

«Հարկ ենք համարում ընդգծել նաեւ, որ Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան ներկայացրած 'Խաղաղութեան Խաչմերուկի կառավարութեան ներկայացուցիչներին: Վերահաստատում ենք, որ դրա շրջանակներում տարածաշրջանային հաղորդակցութիւնների բացումը հնարաւոր է բառացիօրէն ամէն պահի: 'Խաղաղութեան Խաչմերուկի նախագիծը դրական արձագանգի է արժանացել մի շարք միջազգային գործընկերների կողմից, եւ ՌԴ ԱԳՆ գործընկերներին կոչ ենք անում կողմնակալ յայտարարութիւններով սապօթաժի չենթարկել այն, ոչ էլ Հարաւային Կովկասում խաղաղութեան հասնելու ջանքերը:

«Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը բազմիցս վերահաստատել եւ հիմա էլ վերահաստատում է իր հաւատարմութիւնը խաղաղութեան օրակարգին եւ իր բաժին աշխատանքը կը կատարի այդ օրակարգը բարեկաշիւ իրացնելու համար», ըսուած է Հայաստանի Արտաքին Գործոց Նախարարութիւնը պատասխանին մէջ:

ԵՄ-ն Պաքուին Կոչ Կ'ընէ

Շարունակուած էք է-էն

Ատրպէյճանի համար՝ վերահաստատելու իր յանձնառութիւնը միջազգային իրաւունքին:

'COP29-ը Ատրպէյճանի համար հնարաւորութիւն է՝ վերահաստատելու իր հաւատարմութիւնը

միջազգային իրաւունքով ստանձնած պարտաւորութիւններուն եւ պայմաններ ստեղծելու ազատ ու անկախ քաղաքացիական հասարակութեան աշխատանքի համարդ, ըսած էր ԵՄ արտաքին քաղաքականութեան հարցերով մամուլի խօսնակը:

Հայաստանին Պիտի Տրամադրուի 200 Միլիոն

Շարունակուած էք է-էն

պուղիին (երկարութիւնը՝ շուրջ 7 քմ) կառուցման եւ գոյութիւն ունեցող ՄՉ Երեւան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման շուրջ 4 քմ


(Քաջարանի փապուղիի մուտք - Միսիան-Քաջարան նախատեսուող նոր ճանապարհահատուածի խաչմերուկ) երկարութեամբ հատուածի վերակառուցման աշխատանքները:

չ'ունին, որ լաւ պիտի անցնի», «անցեալ անգամ մարդիկ իսկապէս կեղբոնացած էին Տուպայի վրայ: Չեմ կարծեր, որ նոյնքան կեղբոնացում ըլլայ Ատրպէյճանի վրայ»:


Իմ կարծիքովս Ալիւսի վարչակարգը ապարդիւն կը փորձէ իր սեւ երեսը ճերմկցնել, իսկ ինչ կը վերաբերի Հայաստանին՝ դրկուած հրաւէրին քիչ մը ծիծաղելի է...:

ՍԱՄՈՒԷԼ ՂԱԶԱՐԵԱՆ

ԿԼԵՆՏԵՂՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԼ ԱՆՈՒԱՆԻ ԻՐԱՆԱԳԷՏ ՎԱԿԱՆ ԲԱՅՐՈՐԴԵԱՆԻ «ԻՐԱՆԻ ՊԱՏՈՒԹԻՒՆ» ԳՐՔԻ ՇՆՈՐԿԱՆՈՒՄ




Օգոստոսի 1-ին ԱՄՆ Կլենտոյցի քաղաքի իրանահայ միութեան կեդրոնում տեղի ունեցավ անուանի արեւելագէտ, պատմաբան, միջազգայնագէտ, դիւանագէտ, իրանի իսլամական հանրապետութիւնում ՀՀ նախկին արտակարգ եւ լիազօր դեսպան, պատմական գիտութիւնների դոկտոր, պրոֆէսոր Վահան Բայրուրդեանի «Իրանի Պատմութիւն» ուշագրաւ գրքի շնորհանդէսը, որին ներկայ էին գիտնականներ, դիւանագէտներ, հոգեւորականներ, հասարակական գործիչներ եւ այլք: Ծնորհանդէսն իր ողջոյնի խօսքով բացեց իրանահայ միութեան անդամ Թոմիկ ալեքսանեանը, որից յետոյ ներկաներին եւ միջոցառումն օրհնեց հայ առաքելական եկեղեցու հիւսիսային ամբարիկայի արեւմտեան թեմի առաջնորդ գերաշնորհ Տէր Յովնան արքեպիսկոպոս Տէրտէրեանը: Սրբազանի օրհնանքի խօսքից յետոյ հանդէս եկաւ Վահան Բայրուրդեանի որդին՝ Արմէն Բայրուրդեանը՝ նշելով այս գրքի՝ իր համար առաջնային կարեւորութիւններն ու առանձնատուութիւնները:



Գրքի շնորհանդէսին ներկայ էր նաեւ ԵՊՀ ռեկտոր Յովհաննէս Յովհաննիսեանը, ով իր խօսքում նշեց, որ տարիներ շարունակ ԵՊՀ-ում գործել է արեւելագիտութեան դպրոցը եւ մասնաւորապէս կարեւոր ու հօգը է եղել եւ շարունակում է այդպիսին մնալ հայ իրանագիտութիւնը, որը տարեցտարի զարգացում է ապրում: Ընդգծելով այս գրքի բացառիկ արժէքը՝ Յովհաննիսեանը շեշտեց, որ այն հայ իրանագիտութեան նոր աստիճանն է եւ բացառիկ է իր համապարփա-

կութեամբ: Այնուհետեւ դաշնամուրի կատարմամբ հանդէս եկաւ Յովհաննէս Առաքելեանը, որին յաջորդեց ասմունքող Նունէ Աւետիսեանի կատարումը: Լոս Անճելոսի Հարաւային Գալիֆորնիայի համալսարանի (UCLA) Նարեկացու անուան հայագիտութեան ամպլոնի վարիչ, պրոֆէսոր Փիթեր Քաուլին իր խօսքում ընդգծեց արեւելագիտութեան դերն աշխարհում՝ այդ համատեքստում նշանակալի համարելով հայ իրանագիտութեան եւ յատկապէս այս գրքի արժէքը, որը իւրովի եւ նորովի է ներկայացնում իրանը: Նա յատուկ նշեց, որ այս նոր լրջի ներքոյ է ներկայացնում իրանը եւ շատ կարեւոր է ինչպէս պատմաբանների, այնպէս էլ քաղաքագէտների համար: Պատմական գիտութիւնների թեկնածու, իրանագէտ, ՀՀ գաա արեւելագիտութիւն ինստիտուտի նախկին գիտնական-քարտուղար Սամուէլ Ստեփանեանը նշեց, որ այս գիրքը նորովի մօտեցում է՝ բացայայտելու իրանի նման խորքային պետութիւնը, որը բազմաթիւ թելերով կապուած է մեր երկրի ու մեր ազգի հետ: Ստեփանեանը կարեւոր համարեց նաեւ շարքային քաղաքացիների՝ այս գիրքն ունենալու առաջնահերթութիւնը, քանի որ, որպէս հարեւան ժողովուրդներ, հայերն ու իրացիները պէտք է լաւ ճանաչեն իրար: Բայց այդ հնարաւորութիւնը տրուել է միայն ՆՍՀՄ փլուզումից յետոյ, իսկ 30-40 տարին բաւական քիչ է: Ըստ գիտնականի՝ այս գիրքը լրացնում է այդ բացը: Երեւանի պետական համալսարանի զարգացման եւ նորարարութիւնների գծով պրոռեկտոր, բնաստիական գիտութիւնների թեկնածու Միքայէլ Յովհաննիսեանն իր թիւս այլ դրուատական խօսքերի՝ կարեւորեց գրքի կառուցուած քային-բովանդակային կողմերը, որոնք մարդուն թոյլ են տալիս փուլ-փուլ մօտենալու իրանի պատմութեանը եւ բազմակողմանիօրէն ճանաչելու այն: Վերջում հանդէս եկաւ Արմէն Բայրուրդեան՝ շնորհակալութիւն յայտնելով ներկաներին՝ դրուատանքի խօսքեր ասելու եւ գիրքը կարեւորելու համար: Նա նշեց, որ ցանկացած գիտնականի համար նման միջավայրը, նման մարդկանց ներկայութիւնն ու բարձր գնահատականները ստիպուն են անդադար աշխատել եւ արարել: «ԵԼԱԿԵՏ»

«Հնչակեան Կուսակցութեան Կազմաւորումը Ժընեւի Մէջ Եւ Քսան Կախաղաններու Ժառանգութիւնը» ԱՆԳԼԵՐԷՆ ԳԻՐՔԻ Զրատարակութիւնը



Հնչակեան կուսակցութիւնը առաջին յեղափոխական սոցիալիստական կուսակցութիւնն էր Օսմանեան կայսրութեան եւ Պարսկաստանի մէջ: Անոր բոլոր հիմնադիրներն ու տեսաբանները մարքսիստներ էին: Ան հիմնուած է կովկասահայ վեց ուսանողներու կողմէ, որոնք Արեւմտեան Եւրոպա եկած էին գլխաւորաբար Փարիզի, Մոնփելիէի, Լոզանի, Յիւրիխի եւ Ժընեւի համալսարաններուն մէջ ուսանելու նպատակով: Հնչակեան կուսակցութեան վերոնշեալ հիմնադիրներէն ոչ ոք Օսմանեան Թուրքիոյ քաղաքացի էր, սակայն անոնք զաղափարական սեւեռակէտ դարձուցած էին ազատագրել հայ ժողովուրդը օսմանեան բռնատիրութենէն: Այս նպատակին ծառայելու համար անոնք 1886 թուականի վերջին քառորդին ժընեւի մէջ կը հիմնեն «յեղափոխական ընկերութիւն» մը, որու ծրագիրը 1887 թուականի առաջին քառորդին վաւերացնելէ ետք՝ կը հաստատեն կրանիթեայ անկիւնաքարը հե-

տագայ Հնչակեան կուսակցութեան: Առկայ հատորը հանգամանօրէն կ'անդրադառնայ նաեւ հնչակեան Քսան կախաղաններու իրադարձութեան, մասնաւոր անոր լայն արձագանգին, որ մասնաւոր տեղ գտած է եւրոպական մամուլին եւ կայսերական Գերմանիոյ դիւանագիտական թղթակցութեանց մէջ: Գիրքը միաժամանակ ցայտուն կը դարձնէ պատմական այն փաստը, որ Քսան կախաղանները դառնալով առաջին զոհերէն Երիտթուրքերու նիւթած հայաջինջ ծրագրին՝ ստոյգ ահազանգ մըն էր հուսկ իրականացուող Հայոց ցեղասպանութեան: Կազմ - Փափուկ (Բ. եւ համալրուած տպ.) ISBN - 978 9933 445 393 Չափ - 21 x 13,5 սմ. էջ - 216 Լուսանկարներ - 86 Կշիռ - 260 կրամ Հրատարակ - Յուլիս 2024 Հրատարակիչ - Կիլիկիա հրատարակչատուն Գինը - 20 ԱՄՆ տոլար Ստանալու համար դիմել - www.ciliciabooks.com

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

* \$75,00 * \$125,00 (first class) for USA

\$ 175,00 (Air Mail) for Canada.

\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel:-----

Email:-----

Զաւէն Խանճեանի Յիշատակին (Յուլիս 31, 1944-Օգոստոս 9, 2024)



ՎԵՐ. ԴՈԿՏ. ՎԱՐՍԱՆ Յ. ԹՈՒԹԻԿԵԱՆ

Զաւէն Խանճեան, Հայց. Աւետարանական Եկեղեցւոյ կարկառուն աշխարհական ղեկավարներէն մէկը, այս աշխարհէն երկինք փոխադրուեցաւ Ուրբաթ, Օգոստոս 9, 2024-ին:

հաննու անուններով, գրուած են Ք.ե. 6090ական թուականներու ընթացքին: Մարկոսի աւետարանը, ընդհանուր առմամբ, կը համարուի ժամանակագրական կարգով ամենահինը, որ մեծ հաւանականութեամբ գրուած ըլլալու է Ք.ե. մօտ 6570ական թուականներուն: Մատթէոսի եւ Ղուկասու աւետարանները հաւանաբար յաջորդած են Ք.ե. 7080ականներուն, մինչդեռ Յովհաննու աւետարանը գրուած է Ք.ե. 90100ական թուականներուն:

Պողոս առաքելի թուղթերէն եւ աւետարաններէն բացի, Ա. դարուն գրուած են նաեւ այլ կարեւոր ստեղծագործութիւններ, ինչպիսիք են Գործք առաքելոցը (հաւանաբար Ք.ե. 8090ական թուականներուն) եւ այլ թուղթեր, օրինակ՝ Յակոբոս առաքելի ընդհանրական թուղթը, Պետրոս առաքելի ընդհանրական թուղթերն ու Յովհաննէս առաքելի ընդհանրական թուղթերը: Յովհաննու յայտնութիւնը նոյնպէս գրուած է Ա. դարու վերջը, հաւանաբար Ք.ե. շուրջ 95 թուականին: Ահաւասիկ սոցնր են՝ Թադրել կու տայ, որ անհաւանական է Քրիստոսի Համբարձումէն եւ Հոգեգալտեան եղելութենէն անմիջապէս ետք, Ձիթենեաց լեռան վրայ, առաքելներուն ձեռքով իրականացած ըլլայ նման կանոններու յօրինում մը, նոյնիսկ եթէ քրիստոնէական գրականութիւնը անոնց «Կանոնք առաքելականք» անունը վերագրէ:

Ս. գիրքի արդի մեկնաբանները կ'ենթադրեն, որ «Կանոնք առաքելականք»ը ծնունդ է ասորական միջամիջոցի, գրուած ըլլալու է հաւանաբար Սուրբոյ տարածքին եւ կ'արտացոլացնէ Անտիոքի եկեղեցոյ ծիսական սովորութիւններն ու կրօնական ընկալումները: Վերեւ նշեցի, որ այս ստեղծագործութեան հեղինակը իր գրութեան կը վերագրէ ուղղակի առաքելական ծագում մը, որ միանգամայն անհաւանական է: Իրողութիւնն այն է, որ այդ կանոնները հին եկեղեցական աւանդութիւններէ եւ քրիստոնէական գրաւոր վկայութիւններէ քաղուած կանոնակարգերու խմբագրում կամ ժողովածու մըն է: Գիտութիւնն այսօր հաւանական կը գտնէ, որ «Կանոնք առաքելականք»ը կը հիմնուի քրիստոնէական աւելի վաղ փաստաթուղթերու վրայ, ինչպիսիք Գ. դարէն «Վարդապետութիւն առաքելոց»ն է, որ նմանապէս ասորական միջամիջոցին կը սերի:

Բնականաբար պատմական սոյն փաստերը ամենեւին չեն նսեմացներ «Կանոնք առաքելականք»ի եկեղեցագիտական նշանակութիւնն ու արժէքը՝ քանի մը պատճառներով. նախ՝ ան կը հաղորդէ վաղ եկեղեցական կեանքի գործառնութիւնը, ծիսական սովորութիւններու բովանդակ նկարագրութիւնը, նաեւ պատարագի, մկրտութեան եւ այլ խորհուրդներու, որոնք մեզի կ'ընձեռեն յստակ պատկերացում մը՝ աւելի լաւ ըմբռնելու համար վաղ եկեղեցական կեանքին մէջ կիրարկուող պաշտամունքն ու խորհրդակատարութիւնները: Բաց աստի, ան արժէքաւոր տեղեկութիւններ կու տայ եկեղեցոյ նուիրապետական կարգի՝ եպիսկոպոսներու, քահանաներու, սարկաւազներու, նաեւ սարկաւազակներու մասին: Կարելի է անտեսել նաեւ այդ կանոն-

ներուն պարունակած հոգեւոր եւ բարոյական ցուցմունքները, որոնք կ'ընդգծեն քրիստոնէական ապրելակերպն ու կարգապահութիւնը:

Անդրադառնալով ամուսնութեան եւ եկեղեցականներու կուսակրօնութեան հարցերուն՝ միանգամայն ճիշդ նկատած է Արմենակ Եղիայեան, որ ո'չ Յիսուսի ժամանակ եւ ո'չ ալ Դ. դարուն, ըստ «Կանոնք առաքելականք»ին մէջ ներառուած կանոններուն, կուսակրօնութիւնը Յիսուսի հետեւելու եւ իր հիմնած եկեղեցիին ծառայելու պարտադիր պայման չէ եղած: Եկեղեցոյ նուիրապետական կարգին մէջ ամուսնացեալ եկեղեցականութիւնը շատ բնական երեւոյթ էր, սակայն անոր կը թելադրուէր մաքրակեցեղ եւ օրինակելի կեանք մը վարել՝ հեռու մնալով հեշտութենէ եւ սեռային անբարոյականութենէ: «Կանոնք առաքելականք»ը եկեղեցական բոլոր աստիճաններուն համար կ'ամրագրէ միակնութեան օրէնքը:

Խիստ հետաքրքրական է Արմենակ Եղիայեանի մատնանշած կանոնը, որ կարգուած է 444 թուականին Հայ եկեղեցոյ գումարած ազգանիւնեկեղեցական անդրանիկ ժողովներէն Շահապիվանի մէջ: Սոցնր Շահապիվանի սահմանած ի կանոններու շարքին ԺԴ-ն է, որ կը հրահանգէ.

«Եպիսկոպոս կամ երեց կամ սարկաւազ, կամ ով եւ իցէ որ ի պաշտաւնեց կամ ուխտէ, տանտիկին կին զոք մի ի իշխեսցէ ունել, որպէս եւ սովորութիւնն է սօնեցից»:

Այս կանոնը յաճախ սխալ մեկնաբանուած կամ նոյնիսկ չարաշահուած է իբրեւ փաստ վերագրուելով, թէ ահաւասիկ Ե. դարուն Հայ եկեղեցին կուսակրօնութեան վերաբերեալ օրէնք կը սահմանէ՝ արգիլելով եկեղեցականներուն «տանտիկին» ունենալ: Բնականաբար խօսքը այստեղ ոչ թէ ամուսնական օրհնութեամբ կողակից մը ունենալու մասին է, այլ արտաքոյ ամուսնութենէ յաւելեալ «տանտիկին»ի մը՝ եկեղեցականներու սեռային պահանջք բաւարարելու նպատակով: Եղիայեան երեւոյթը կը մեկնաբանէ՝ ընդծելով.

«Ասոնք խորքին մէջ անառակ կիներ էին, որոնք անուսնացած տղամարդոց կողմէ՝ աշխարհիկ թէ հոգեւոր, տուն կ'առնուէին՝ իբրեւ թէ օգնելու համար օրինակուոր կ'ընէին այստեղ սոցնր տարբերակը, սակայն եւ այնպէս ան պարտադիր օրէնքի մը չի վերածեր գայն: Ա. կորնթացոց է, 78 համարներուն մէջ ան կը դրսեւորէ այն ցանկութիւնը, թէ պիտի փափաքէր, որ բոլոր մարդիկ եկեղեցիին առաքելութեան համակնուիրուելու համար իրեն նման ամուրի ըլլային, սակայն իրատեսօրէն կ'անդրադառնայ, որ Աստուած իւրաքանչիւր մարդու տուած է համապատասխան շնորհ մը, եւ Յիսուսի հաւատքին բոլոր հետեւողները, անկախ իրենց կուսակրօն թէ ամուսնացեալ կարգավիճակէն, կոչուած են Քրիստոսի յարութեամբ կենսագործուած փրկութեան:

Արդարեւ, «Կանոնք առաքելականք»ի յունարէն բնագրը եւս նման երեւոյթ մը կը նշէ իր Զ. գիրքի ԺԷ. կանոնին մէջ, ուր կը սահմանէ.

«Որեւէ եկեղեցականի թոյլ չենք տար ունենալ կուրտիզանուի, տնային ստրկուի, այրի կամ ամուսնալուծուած կին մը»:

Փաստօրէն խօսքը պերճադիճ, այլ խօսքով՝ պալատական հոմանունի, հանրակին, բարձրաշխարհիկ միջամիջոցի մէջ քարշ եկող կուրտիզանուի պահելու մասին է, որ յաճախ չարաշահուած է նաեւ բարձրաստիճան եկեղեցականներու կողմէ՝ գաղտնօրէն յազուրդ տալու համար իրենց սեռային կիրքերուն:

Յիսուս բացառապէս չէր հանձնեց կուսակրօնութիւն կամ ամե-

նեւին չյայտարարեց, որ այդ տեսակ կենցաղակերպ մը պայման է իրեն հետեւելու համար: Աւետարանները որոշապէս չեն նշեր ուղղակի Յիսուսին տրուած պատգամներ, որոնք կը վաւերացնեն կուսակրօնութիւնը՝ աշակերտել կարենալու համար իրեն: Յիսուսի հետեւող առաքելներու եւ 72 աշակերտներու թիւին մէջ ստոյգ կային մեծամասնութիւն մը կազմող մարդիկ, որոնք ամուսնացած, ընտանիքի եւ զաւակներու տէր էին: Այնուամենայնիւ, աւետարաններուն մէջ կան համապատասխան որոշ հատուածներ, որոնք կ'անդրադառնան ինդրոյ առարկայ նիւթին:

Մատթէոս ԺԺ.ին մէջ Յիսուս կը հակադէ փարիսեցիներու ամուսնալուծութեան վերաբերեալ հարցումին եւ կը պատգամէ այլ մարդու եւ կնոջ անբաժանելի միութեան սկզբունքը՝ ըսելով. «Արդ, զոր Աստուած զուգեաց՝ մարդ մի՛ մեկնեսցէ»: Ապա ան հակադրուելով մովսիսական օրէնքին՝ կը շարունակէ. «Ով որ իր կինը կ'արձակէ առանց պոռնկութեան պատճառի եւ ուրիշ մը կ'առնէ՝ կը շնայ. կը շնայ նաեւ ան, որ արձակուածը կ'առնէ»: Աշակերտներ այս լսելով կը գայթակղին ու կ'առարկեն. «Եթէ ամուսնութիւնը այդպէս դատապարտութեան պատճառ կրնայ ըլլալ այլ մարդու եւ կնոջ համար՝ լաւ է ընդհանրապէս չամուսնանալ»: Յիսուս կը պատասխանէ անոնց. «Ամէնքը ընդունակ չեն այդ բանին, այլ անոնք միայն, որոնց տրուած է. որովհետեւ կան ներքինինք, որոնք իրենց մօր որովայնէն այդպէս ծնած են. կան ներքինինք ալ, որոնք մարդոց կողմէ ներքինի դարձած են. ներքինինք ալ կան, որոնք իրենք զիրենք ներքինի դարձուցած են երկինքի արքայութեան համար. ով որ կրնայ տանիլ՝ թող տանի»: Յիսուսի սոյն յայտարարութիւնը յստակ ու մեկին կը դարձնէ այն փաստը, որ կուսակրօնութիւնը ազատ ընտրութեան տարբերակ մըն է, բայց ոչ՝ պարտաւորութիւն:

Պողոս առաքել, որ նշանակալի դեր խաղացած է նախնական եկեղեցիի կազմաւորման ուղղութեամբ, կուսակրօնութիւնը կը խրախուսէ լոկ անոնց համար, որոնք յօժարակամ կ'ընդունէին այստեղ սոցնր տարբերակը, սակայն եւ այնպէս ան պարտադիր օրէնքի մը չի վերածեր գայն: Ա. կորնթացոց է, 78 համարներուն մէջ ան կը դրսեւորէ այն ցանկութիւնը, թէ պիտի փափաքէր, որ բոլոր մարդիկ եկեղեցիին առաքելութեան համակնուիրուելու համար իրեն նման ամուրի ըլլային, սակայն իրատեսօրէն կ'անդրադառնայ, որ Աստուած իւրաքանչիւր մարդու տուած է համապատասխան շնորհ մը, եւ Յիսուսի հաւատքին բոլոր հետեւողները, անկախ իրենց կուսակրօն թէ ամուսնացեալ կարգավիճակէն, կոչուած են Քրիստոսի յարութեամբ կենսագործուած փրկութեան:

Անշուշտ Յիսուս իր հետեւողներէն կը պահանջէ թողուլ ամէն ինչ, ձերբազատիլ նիւթական բոլոր տեսակ կապուածութիւններէ՝ շահիլ կարենալու համար հոգեւորը: Իրեն հետեւելու համար ան

Յաւերժական Առեղծուածներու Լարիրիմօին Մէջ Կը Փնտռուին Պատասխաններ

Շարունակուած էջ 14-էն

տեսակ մը պայման կը դնէր հրա-
ժարիլ ամէն ինչէ՛ թէկուզ սեփա-
կան ընտանիքէ, ունեցուածքէ եւ
աշխարհիկ կապուածութենէ (ՂԿ.
ԺԴ, 2633; Մտթ. ԺԻ, 21): Այնուա-
մենայնիւ, այս կողմը յատուկ չի
վերաբերիր ամուսնութեան, այլ
շատ աւելի Աստուծոյ արքայու-
թեան համապարփակ նուիրուելու
առաջնահերթութեան:

Կուսակրօնութիւնը, որպէս
եկեղեցականներու պարտադիր կեն-
սաձեւ, յառաջացաւ եկեղեցւոյ պատ-
մութեան աւելի ուշ շրջաններուն:
Միջին դարերուն եկեղեցւոյ գործ-
նական կեանքին մէջ սոյն ապրելա-
կերպը հետզհետէ աւելի ընդունե-
լու թիւն գտաւ եւ պաշտօնապէս
ամրագրուեցաւ ԺԲ. Դարուն՝ 1139
թուականի Լատերանի Բ. ժողովով:

Պատմական երեւոյթները գու-
գադիպութիւններով չեն իրակա-
նանար, այլ կ'ունենան իրենց զար-
գացման դրդապատճառները: Այս-
պէս է նաեւ եկեղեցականներու կու-
սակրօնութեան պարագան, որ յա-
ռաջացած է մի քանի աստուածա-
բանական, գործնական եւ պատմա-
կան նկատառումներէ ու պատճառ-
ներէ: Ահա այն հիմնական գործօն-
ները, որոնք նպաստած են եկեղեց-
ւոյ մէջ կուսակրօնութեան տա-
րածման.

ա) Աստուածաշնչական եւ աստուածաբանական պատճառ- ներ

Յիսուս ամուսնացած չէր, եւ
իր առաքեալներէն ոմանք, յատկա-
պէս Պողոս առաքեալ իր թուղթե-
րուն մէջ արծարծեց քրիստոնէութե-
ան տարածման եւ եկեղեցւոյ
կազմակերպութեան գործին նուիր-
ուելու համար կուսակրօնութեան
առաւելութիւնները (Հմմտ. Ա. Կորն-
թագիս է, 78): Կուսակրօնութիւնը
կ'ընկալուէր իբրեւ Քրիստոսի
փրկութեան գործին եւ եկեղեցւոյ
առաքելութեան անմնացորդ նուիր-
ուելու լաւագոյն միջոց:

Կար անշուշտ հասկացու թիւն
մը, որ կուսակրօնութիւնն ու մաք-
րաբարոյութիւնը կը ներկայացնեն
սրբութեան բարձրագոյն մակար-
դակ մը, որ ամբողջապէս կը նոյ-
նանար քահանայութեան կոչումին
հետ:

բ) Գործնական պատճառ- ներ

Կուսակրօնութեան եկեղեցականին
կ'ընձեռուէր աւելի մեծ առաւելու-
թիւն մը կեդրոնանալ կարենալու
համար իր հոգեւոր եւ հովուական
պարտականութիւններուն վրայ՝
առանց ընտանեկան կեանքի պար-
տաւորութիւններու եւ շեղումնե-
րու:

Կուսակրօնութեամբ առաջ քը
կ'առնուէր ընտանեկան ժառանգա-
կանութեան՝ եկեղեցիին բարձրա-
գոյն պաշտօններու փոխանցումը
հօրմէն որդիին եւ այսպէս յաջոր-
դաբար՝ հարազատներուն: Մինչ-
դեռ ժառանգականութեան բար-
ձրմով եկեղեցականներու թողօնը
կը մնար եկեղեցիին սեփականու-
թիւնը, որուն շնորհիւ կարելի կը
դառնար պաշտպանել եկեղեցւոյ
կառավարման ամբողջականու-
թիւնը:

գ) Պատմական եւ ընկերա- յին հասարակական պատճառ- ներ

Վճռորոշ դեր ունեցան քրիս-
տոնէական անապատական եւ վա-
նական շարժումները: Ասոնք նա-

խապէս ընկերային հասարակական
միջավայրէ հեռու եւ բոլորովին
մեկուսացած կեանք մը կը վարէին:
Կեանքի բոլոր երեւոյթները, որոնք
կրնային զգացական հաճոյքի պատ-
ճառ դառնալ՝ մեղք կը նկատուէին
եւ վճռականապէս կը մերժուէին
վանականութեան կողմէ: Նոյնիսկ
մարմնաւոր սնունդը, որ կրնար
քիմքին հաճելի թուիլ, իբրեւ մեղ-
սագործութեան առաջնորդող գայ-
թակղութիւն կ'ընկալուէր եւ, բնա-
կանաբար, ընկալումներու այս հա-
մատեքստին մէջ մարմնական որե-
ւէ հաճոյք, առնչուած ամուսնու-
թեան եւ սեռային այլ յարաբերու-
թիւններու, ծանրագոյն մեղք կը
նկատուէր: Պէտք է մոռնալ, որ
մարդիկ բառացիօրէն հաւատացած
էին, որ Քրիստոսի երկրորդ գա-
լուստը վերահաս էր, ուստի հարկ
էր ի գին ամէն տեսակ գոհողու-
թիւններու ձեռք բերել հոգեւոր եւ
մարմնաւոր սրբութիւն մը՝ պատ-
րաստ ըլլալու համար վերջին դա-
տաստանին եւ այսպէս արժանանա-
լու Քրիստոսի շնորհած մշտնջե-
նական փրկութեան:

Վանական շարժումին սոյն
գաղափարախօսութիւնը հետզհետէ
քրիստոնէական գրականութեան եւ
քարոզախօսութեան միջոցով տա-
րածում գտաւ նաեւ հովուական
կեանքի ասպարէզին մէջ, ուր ամուս-
նացեալ եկեղեցականութիւնը տա-
կաւ առ տակաւ ստիպուած եղաւ իր
տեղը գիշիլ կուսակրօն վանակա-
նութեան ներկայացուցիչներուն:

Բաց աստի, եկեղեցական գա-
նազան ժողովներ եւ օրէնքներ վճռո-
րոշ դեր խաղացին կուսակրօնու-
թեան յաղթական արշաւին եւ անոր
հաստատումին: Վերեւ նշեցինք 1139
թուականին վեմարուած Լատե-
րանի Բ. ժողովը, որ պաշտօնապէս
ամրագրեց Հռոմէական կաթողիկէ
եկեղեցւոյ կղերին բացարձակ կու-
սակրօնութիւնը:

դ) Հոգեւոր կարգապահու- թիւն եւ գոհողութիւն

Կուսակրօնութիւնը նաեւ գնա-
հատուեցաւ իբրեւ Քրիստոսի եւ
եկեղեցիին համակ նուիրուածու-
թեամբ ծառայելու համար անձնա-
կան գոհութեան եւ պատրաստա-
կամութեան երաշխիք: Արդարեւ
ան կը խորհրդանշէր լիարժէք
նուիրում մը հոգեւոր առաքելու-
թեան՝ ազատակամ հրաժարելով
աշխարհիկ հոգերէ, ընտանեկան եւ
ընկերային կապերէ ու պարտաւոր-
ութիւններէ:

Պարագան նոյնն էր նաեւ Հայ
եկեղեցիին, ուր մինչեւ Ե. դար՝
Սահակ Պաթեւ կաթողիկոս, Ս.
Գրիգոր Լուսաւորիչէն սկսեալ հա-
յոց հայրապետներն ու եպիսկոպոս-
ները, քահանաներն ու սարկաւազ-
ները ամուսնացեալ էին, իսկ քա-
հանայապետական աթոռը ժառան-
գական էր: Այստեղ եւս պատմական
գրեթէ նոյն գործօնները իրենց
կարեւորագոյն դերակատարու-
թիւնը ունեցան՝ հետզհետէ սահմա-
նափակելու ամուսնացեալ բարձ-
րաստիճան եկեղեցականութեան
տոհմիկ աւանդութիւնը: Բարե-
բախտաբար, ինչպէս պարագան է
Արեւելեան ուղղափառ եկեղեցիներ-
ուն, Հայ եկեղեցին եւս կուսակրօ-
նութեան կողքին պահպանեց ամուս-
նացեալ քահանայութեան պաշտօ-
նը, սակայն յատկացուց գոյն միայն
եկեղեցւոյ հովուական ծառայու-
թեան ասպարէզին՝ գրկելով ամուս-
նացեալ քահանան, անկախ իր ու-
նեցած կոչումէն, բարձր գիտակ-
ցութենէն եւ ձեռք բերած ուսում-

նական պատրաստութենէն, եկե-
ղեցւոյ ղեկավարութեան բարձրա-
գոյն պաշտօններու ձգտելու եւ
զանոնք յաջողապէս վարելու հնա-
րաւորութիւնէն:

Մեր բազմաշարժար եւ հաւա-
տաւոր ժողովուրդը այնքան մեծա-
րանք եւ անմնացորդ յարգանք
ցուցաբերած է իր կուսակրօն վար-
դապետներուն հանդէպ, որ չէ զլա-
ցած անոնց «հայր սուրբ» գերա-
զանց պատուանունով դիմելու,
մինչդեռ կաթողիկէ եկեղեցին այդ
առանձնաշնորհումը միայն Սրբա-
զան քահանայապետին՝ Հռոմի պա-
պին վերապահած է եւ ոչ իսկ իր
ծիրանաւոր կարտինալներուն:

Անտարակոյս, մաքրաբարոյ
կուսակրօնութիւնը սրբութեան գե-
րազանց երաշխիք մըն է: Մենք
ունեցած ենք արժանահաւատ հայ-
րապետներ եւ վարդապետներ՝ Օձ-
նեցիներ, Նարեկացիներ, Շնորհա-
լիներ, Լամբրոնացիներ, Որոտնե-
ցիներ եւ Տաթեւացիներ, որոնք
եղած են Հայ եկեղեցւոյ հոգեւոր-
բարոյական հեղինակութեան եւ
սրբակենցաղութեան անզուգական
ներկայացուցիչները: Սակայն այ-
սօր կուսակրօնութիւնը դարձած է
ձեւ բանի մը, եւ նոյնացած է
ընդամէնը պաշտօնապէս ամուսնա-
ցած ըլլալու եւ ընտանիք չկազմե-
լու հանգամանքին հետ: Առանց
ընդհանրացնելու երեւոյթը, յար-
գելով հանդերձ նաեւ մեր մէջ
տակաւին սրբակենցաղ եկեղեցա-
կաններու ներկայութիւնը, պիտի
փոխ առնէի Եղիշէ արք. Տէրտէր-
եանի թեւաւոր մէկ խօսքը, որ
հասցէագրած է մեր մօտ անցեալի
եւ թերեւս այսօրուան կուսակրօն
եկեղեցականութեան՝ «Կուսութիւն-
ին հազար անգամ փոշիացած
կուսակրօններ»:

Կուսակրօնութիւնը նման է
երկապրի սուրի մը. մէկ կողմէ ան
սրբակրօն եկեղեցականը կը սրբաց-
նէ, բայց միւս կողմէ ճշմարիտ

կոչումէ զուրկ անձը, միեւնոյն է,
ինչ տեսակ վեղար կամ անոր վրան
ալ աղամանդակուռ խաչ մը կրէ,
իր բովանդակ իմաստով, բանիւ եւ
գործով, կամայ եւ ակամայ, իր
երեւելի թէ աներեւոյթ կերպարով
գոյն կը դարձնէ կատարեալ անա-
բարոյական մը:

Այս առնչութեամբ բարեկար-
գութիւնը այսօր աւելի քան երբեք
անհրաժեշտութիւն մըն է Հայ եկե-
ղեցիին համար: Եթէ կայ բնագա-
ւառ մը, ուր շատ մը այլ հարցերու
շարքին ամէնէն շատ բարեկարգ-
ուելու կարիքը ունի՝ կուսակրօնու-
թիւնն է:

Մեր եկեղեցւոյ է՛ն խոհուն
մտածողներէն Մաղաքիա արք. Օր-
մանեան իր «Խոհ եւ խօսք» ինք-
նակենսագրական երկասիրութեան
մէջ կուսակրօնութեան ուխտին
ցմահ ըլլալու բնոյթին մասին հե-
տեւեալ քննադատութիւնը կ'ար-
ձանագրէ.

»Խնդիրը ամփոփենք ուխտին
մշտնջենաւորութեան վրայ.

Ինչ ալ ըլլայ ոմանց տեսութիւնը
ու նախապաշարեալ կարծիքը, եւ
խստակօրոններու սկզբունքը, եւ իմ
մասին երբեք անդարմանելի մարդ-
կային գործ մը չեմ ընդունիր, միշտ
կարգ ու կանոնի մը եւ օրինական
պահանջներու պատկառ մնալով:
Ըստ այսմ [կուսակրօնութեան] ուխ-
տի մշտնջենաւորութիւնն ալ կ'իմա-
նամ իբր ցնոր տնօրէնութիւն, այ-
սինքն ցորչափ իրաց վիճակը, ուխ-
տադերին դիրքը, էական պայմանե-
րու ձեւը փոխուած չէ: Մարդ չի կրնար
բովանդակ ապագայն նախատեսել,
եւ իւր կեանքին բոլոր փոփոխութիւն-
ները գուշակել, ուստի անհրաժեշտ է
որ բաց դուռ մը ունենայ իւր դիրքը եւ
կացութիւնը փոփոխելու եւ նոր դիր-
քին յարմարելու: Ըստ այսմ բնաւ
դժուարութիւն չեմ զգար եւ դիտողու-
թիւն չեմ ընել, եթէ կուսակրօնութեան


Շար.ը էջ 19

Homenmen Ladies Auxiliary
invites you to
CIGAR NIGHT
Under The Stars
OCTOBER 4, 2024
8PM
Valuable Raffle Prizes!
DJ, Raffle, Maza & Dinner, Cigars & Outdoor Fun!
LOCATION: Clubhouse at Griffith Park
5500 Griffith Park Drive, Los Angeles, CA 90027
RSVP : Karine (818) 324-0574
Lena (626) 485_6434
Donation \$150
Includes Alcohol

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ Ալպեր Սամէն՝ Գեղարուեստագետ Քնարերգակ Քերթողը

ՅԱԿՈԲ ՏԻՒՆԵԱՅԵԱՆ

Խորհրդապաշտ կամ Սէմպոլիսթ դպրոցի կարկառուն ներկայացուցիչներէն, ֆրանսացի քնարերգակ մեծատաղանդ բանաստեղծ Ալպէր Սամէնի (Լիլ, Ֆրանսա, 3 Ապրիլ 1858 □ Մանի-լէ-Համօ, Փարիզ, 18 Օգոստոս 1900) կեանքին կարճատեւ ժամանակաշրջանը եւրոպացի գրական տիտաններու համանուագովը հարուստ այն աշխարհն էր, ուր 19-րդ դարու Վիքթոր Հիւկոներու, Շառլ Պօտլէրներու, Փօլ Վերլէններու, Արթիւր Ռէմպոներու, Ալֆրէտ Վալթերներու բանաստեղծական գործերը իրենց խոր ազդեցութիւնն ու արմատները տակաւ կը տարածէին սպրուկներուն խորքը հայ քերթողական արուեստի տիտաններու՝ Վահան Թէքէեանի, Ինտրայի, Միամանթոյի, Արշակ Չօպանեանի, որոնց աւելի ուշ պիտի միանային մասնաւորապէս Վահան Տէրեանը, Միսաք Մեծարեանն ու Մատթէոս Զարիֆեանը:



Ծովն ամայի, ուր նաւակը մեծ ու հին, կը ծփայ, Որուն կոտորած կայմին՝ Յոյսը կը դողայ մութին մէջ Եւ բազուկներն իր թնրած՝ ծալած անձնագ գոգին վրայ...

Հագարաւոր տարիներ, անկումին մէջ գիշերուան, Ոգին ամուր՝ կը նաւէ ու կը տեսնէ սուկումով, Մինչ ինք կ'ուղղուի ընդմէջէն հեծկտուն խոր մթութեան, Եւ տատրակներն իր՝ դէպի անծանօթին վէտ ճախրով...

Տարածելով փետուրներն իրենց՝ կ'ողբան փնտռելին Բոյն՝ մէջէն խօլ բուքին, որ կը մտրակէ փրփուրով Իրենց՝ գինով խոյանքէ, ուր ամպրոպներ կը նետեն

Վեր եւ ամէն սեւ, լկտի այգ, ծփալն որ կը տեսնէ Նաւակին ու թելերուն հետ տարածուող՝ հանգոյն խաչ, Ծովուն վերեւ հեգնակալն՝ դիակներուն իրենց պինդ...

Ֆրանսայի հիւսիսը գտնուող Լիլ քաղաքը՝ որ ծննդավայրն է Սամէնի, հեռու չէ պելճիքական սահմանէն: Ապագայ քերթողին ծնողները՝ որոնք մաս կը կազմէին այդ շրջանի մեծածիւր փրամանկ բնակչութեան, յաջողութիւն գտած գինեկաւաճակներէն էին, ոգեւոր ըմպելիներու վաճառականներէ: Բայց ուսումնառութիւնը Ալպէրի կանուխ կ'ընդհատէ՝ երբ կը մահանայ անոր հայրը: Ան կը շարունակէ կեանքը՝ որոնելով վաճառականական այլ գործ մը:

Սակայն 22-ամեայ Սամէնի մէջ կ'եռեւեկէին տենչն ու հուրը գրականութեան. ուստի ան կ'ուղղուի Փարիզ, 1880-ին: Այստեղ շփում կ'ունենայ եւ մտերմութիւն կը հաստատէ ժամանակի ծանօթ դէմքերու եւ արուեստագէտներու հետ: Իր քերթուածներուն անդրանիկ բովանդակները կը հնչեցնէ Փարիզի սրճարաններու եւ ակումբներու մէջ՝ զինք խրախուսող հոծածիւր ունկնդիրներու առջեւ: Ելոյթներ կ'ունենայ «Սեւ Կատուն» («Le Chat Noire») անուամբ արդիական գիշերային ակումբի՝ քապարէի մէջ, որ այդ ժամանակներուն սկսած էր խմիչքի սեղաններու շուրջ եւ ջերմիկ մթնոլորտի մը մէջ հրապուրել ֆրանսացի զանգուածները, որոնք

մեծերացած մտիկ կ'ընէին ելոյթները Սամէնի, որ ելոյթ ունենալու համար կանգնած կ'ըլլար փոքր բեմահարթակի մը վրայ:

Յստակ էր ու տարակոյտ վեր, թէ Սամէն ազդուած էր յատենի ֆրանսացի գրողներու գործերէն: Ան մեծապէս հմայուած էր մանաւանդ արդիական ոճէն Շառլ Պօտլէրի: Իբրեւ արդիւնք իր այս ուղղուածութեան՝ Սամէնի գործերը յաճախ կը ցուցադրէին հիւանդագին ձայնեղանակներ եղերերգական, դամբանական նիւթեր, որոնք կը յորդէին իր կարգ մը քերթուածներուն ալ ընդմէջէն: Այդ քերթուածներէն շատերը զգեցած ողբերգ սպալի՝ նուիրուած էին նահատակեալ դիւցազուններու:

Նաեւ ջերմ ջատագովն ու պաշտպանն էր Սամէն իր հայրենակից Փօլ Վերլէնի: Մինչ ֆրանսացի գրեթէ բոլոր գրողներուն կողմէ ան կը դասուէր շարքին «դարավերջի մեծերու», Վերլէնի քերթողութիւնը սակայն երբեմն կը պարունակէր անվճռական, վարանողական, տեսակ մը տարտամ երեւակայութիւն ու պատկեր. Սամէն եւս իր գործերուն մէջ կը գործածէր նման ոճ: Իր վերոյիշեալ «Անքուն Գիշեր» քերթուածը, օրինակի համար, կու տայ կատարուած ակնարկին մէկ վառ օրինակը:

Սէմպոլիսթ քերթողը բանաստեղծութիւններով իր եռանդուն աշխատակցութիւնը բերած է «Մերքիւր Տէօ Ֆրանս»ին, «Ռեվիւ Տէ Տէօ Մոնտ»ին եւ ժամանակի այլ թերթերու: Ուշագրաւ է, որ ժամանակակից բազմաթիւ անուանի ֆրանսացի ու եւրոպա-

ցի երաժիշտներ, երգահաններ, խմբավարներ ու երաժշտական քննադատներ հրապուրուած Ալպէր Սամէնի քերթուածներուն դաշնաթաւալ յօրինուած քէն ու նուագուն բառերէն՝ կատարած են անոնց հիման վրայ երաժշտական յօրինումներ:

Արդարեւ, երեք քերթողագիրքերու մէջ է ամփոփուած Ալպէր Սամէնի գրական վաստակը. առաջինը՝ «Մանկութեան Պարտէզին Մէջ», 1893-ին, որ իրեն ապահովեց համբաւ ու տուաւ ժողովրդականութիւն՝ երբ արդէն 35 տարեկան էր. երկրորդը՝ «Թաղարին Երկու Կողմերը», 1898-ին. երրորդը՝ «Ոսկեայ Զբօսակառքը», որ լոյս տեսաւ իր մահէն տարի մը ետք՝ 1901-ին: Հետաքրքրական է, որ Վահան Թէքէեանի մէկ բանաստեղծութեան վերնագիրը՝ «Մանկութեան Պարտէզին Մէջ» (1910), կը յուշէ Սամէնի առաջին քերթողագիրքին խորագիրը:

Գեղարուեստագէտ քնարերգակ քերթողը մահացաւ թոքախտէ, 18 Օգոստոս 1900-ին, 42 տարեկանին, երբ կը գտնուէր լիութեան մէջ իր ստեղծագործական ուժերուն: Իր նման միջազգային ճանաչում վայելող բանաստեղծի մը անունն ու գործերը որոնք զարմանալիօրէն մոռացութեան մութին են յանձնած Հայկական Սոսկիւտական Հանրագիտարանն ու Հայկական Համառօտ Հանրագիտարանը, բարեբախտաբար հայ գրականութեան մէջ արժանացած են թարգմանութեան եւ յատուկ ուշադրութեան հայ գրողներու: «Աղթամար»-«Մաղիկ»

Չաւեն Խանճեանի Յիշատակին

Շարունակուած էջ 8-էն

վրայ արմատ նետող տունկի պէս մարդ էր: Իր բոլոր նախաձեռնութեանց մէջ ո'չ տկարութիւն, ո'չ ալ յոգնութիւն ճանչցաւ, անսպառ եռանդով եւ բացառիկ ոգեւորութեամբ բոլորին ծառայեց: Գրեթէ մինչեւ մահ՝ իր տարիքը հերքով աշխոյժ կայտառութեամբ սահման չզրբաւ իր նուիրումի ու զոհաբերութեան ոգիին:

Չորրորդ, Չաւեն Խանճեան իր համոզումներուն մէջ եղաւ անխախտ եւ խիզախ: Հաւատաւոր եւ պատուական այս հայրը ին մինչեւ իր մահը ընկրկում չճանչցաւ իր կրօնական եւ ազգային համոզումներուն մէջ: Վարչական ժողովներուն մէջ եղաւ սկզբունքի մարդը, դատումի օրինական ըմբռնումներու նախաձայնողը: Քաղաքական կարգ մը հարցերու մէջ մնաց անզիջող:

Հինգերորդ, Չաւեն Խանճեան հոգեւոր եւ հայրենասէր անձ մըն էր: Իր ներշնչումը կուգար կրօնասիրութեան եւ ազգասիրութեան գոյգ ակունքներէ: Իր քրիստոնէական անասան հաւատքին հետ զուգահեռ քալեց իր անշահախնդիր հայրենասիրութիւնը: Այս վարձագիծով ան սերտօրէն գործակցեցաւ հայ քոյր համայնքներու առաջնորդներուն հետ՝ վայելելով անոնց անվերապահ սէրն ու գործակցութիւնը:

Իր ամբողջ կեանքի ընթացքին, Չաւեն անաչառ եւ անկեղծ կերպով իր մասնակցութիւնը բերաւ հայ հասարակական գործունէութիւններուն եւ աշխուռ դեր խաղցաւ հայրենասիրական ճակա-

տի վրայ: Ան ամենաջերմ սիրով կապուած էր Հայաստանի հետ եւ աշխատեցաւ սատարել անոր վերելքին:

Վեցերորդ, Չաւեն Խանճեան գրական շնորհներով օժտուած մարդ մըն էր: Սրտի ու հոգիի խուզարկու գաղափարապաշտ նկրտումներու այս նուիրեալ հայրը ին եղաւ նաեւ հայ գրականութեան եւ դպրութեան ածուն ծաղկեցնող հաւատաւոր մշակ մը: Ան հեղինակեց երեք գիրքեր՝ «Սրտի եւ Մտքի Յոլքեր» (2011), «Հալչպ՝ Առաջին Կայարան» (2013) եւ «Այս Տունը Քո՞ւկդ է թէ Իմս» (2017): Զանազան թերթերու եւ պարբերաթերթերու մէջ ստորագրած իր յօդուածները, բայց յատկապէս AMAA News-ի խմբագրականներու եւ այլազան գրութիւններու շարքը եկան հաստատելու իր մտաւորականի անժխտելի տաղանդը:

Չաւեն Խանճեանի մահով մեր հաւաքական կեանքէն կ'անհետի գաղափարապաշտ եւ ընտիր դեկավար մը, հայրենասէր եւ բարոյատիպ աշխարհական առաջնորդ մը, որուն յիշատակը վառ պիտի մնայ միշտ ԱՀԱԸ-ի աշխարհատարած անդամներուն, ինչպէս նաեւ Հայաստանի եւ Սփիւռքի հայրը ինքնու սրտին մէջ:

Մեր խորագրած ցաւակցութիւնը կը յայտնէք հանգուցելի սգակիր իր հարազատներուն, իր տիկնոջ Սոնային, զաւակներուն, թոռներուն, քոյրերուն, եղբօր, գործակիցներուն բարեկամներուն եւ համայն վշտակից պարագաներուն:

Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի:

Կը գրկէ մերկ հորի-գոնն՝ ծովուն թաւալքը անվերջ...

Ս. Աստուածածնայ Վերափոխման Տօնը Բացառիկ Շուքով Նշուեցաւ Թուրքիոյ Հայկական ՎազըՖ Գիւղին Մէջ



Այս տարի բացառիկ նշանակութեամբ տօնուեցաւ Մուրթ Աստուածածնայ Վերափոխման տօնը, Թուրքիոյ Հայկական ՎազըՖ Գիւղին Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ: Արդարեւ, անցեալ տարուան Հայկական երկրաշարժին հետեւանքով վնասուած գողտրիկ եկեղեցին՝ վերանորոգութենէն յետոյ, օծուեցաւ ու պաշտամունքի կատարման համար բացուեցաւ տաղաւար տօնի շաբաթավերջին: Պոլսահայ շրջանակներուն ուշադրութիւնը կեդրոնացած էր այս կարեւոր իրադրութեան վրայ:

Հօր ի պատիւ կազմակերպեց ընթացք մը: Նոյն ժամերուն սկսաւ աւանդական խանդավառութիւնը, որ բնորոշեց նաեւ հարիսայի պատրաստութիւնը: Կիրակի առաւօտ, գիւղի եկեղեցւոյ մէջ տաղաւարի արարողութիւններուն նախագահեց Ամեն. Ս. Պատրիարք հայրը: Օրուան պատարագին էր Տ. Յովակիմ Եպս. Մանուկեան, որ խօսեցաւ նաեւ քարոզ մը: Պատարագի աւարտին եկեղեցւոյ բակին մէջ, կատարուեցաւ խաղողօրէնէք: Հոգեւորականաց դասը թափօրով մօտեցաւ նա-



Այս առթիւ՝ բազմաթիւ ուխտաւորներ մեկնած էին մասնակցելու ՎազըՖ գիւղի արարողութիւններուն: Թուրքիոյ Հայոց պատրիարք ամեն. Տ. Սահակ Արք. Մաշալեան նախագահեց շաբաթավերջի արարողութիւններուն, որոնց իրենց մասնակցութիւնը բերին նաեւ Հայ Առաքելական Եկեղեցւոյ Անգլիոյ Թեմի առաջնորդ Տ. Յովակիմ Եպս. Մանուկեան, «Պարնապաս» հիմնարկի նախագահ՝ Ասորի Ուղղափառ Եկեղեցիէն Տ. Փաթրիք Բորեպիսկոպոս Սուխտէօ, Պատրիարքարանի լուսարարապետ Տ. Տրդատ Ազգ. քնյ. Ուզունեան, ինչպէս նաեւ գիւղին հովիւը Արժ. Տ. Աւետիս քնյ. Թապաշեան: Անգլիոյ Հայոց Թեմէն ալ ուխտաւորներ մասնակցեցան արարողութիւններուն: Շաբաթ կէսօրէ ետք նախ տեղի ունեցաւ եկեղեցւոյ օծման ու պաշտամունքի վերաբացման արարողութիւնը, որուն աւարտին նախատնակի ժամերգութիւնն ալ տեղի ունեցաւ, միշտ բարձր տրամադրութեան պայմաններով: Երեկոյեան՝ ՎազըՖ գիւղի Ծխական Խորհուրդը Ամեն. Ս. Պատրիարք

եւ հարիսայի կաթսաներուն մօտ, ուր կատարուեցաւ օրհնութեան կարգ եւ պատրաստուած աւանդական ուտելիքը բաժնուեցաւ բոլոր հաւատացեալներուն: Եկեղեցական արարողութիւններէն ետք՝ գիւղի մշակոյթի կեդրոնի երգիքին տակ սարքուեցաւ ճաշկերոյթ մը: Երջանկալիչատակ Մեարոպ Պատրիարք Մութաֆեանի անուան ձօնուած այս համալիրին մէջ սեղանակիցներու շարքին էին նաեւ Սամանտաղի փոխ-քաղաքապետ Ատնան Էրէրլմազ եւ ոստիկան գորաց հրամանատար՝ հազարապետ Հարուն Պուլուլ: Յետմիջօրէի ժամերը Ամեն. Ս. Պատրիարք Հայրն անցուց գիւղացիներուն եւ Ծխական Խորհուրդի անդամներուն հետ, զրուցելով զանազան նիւթերու շուրջ: Երեկոյեան՝ հրաժեշտի ընթացք մը սարքուեցաւ Ամեն. Ս. Պատրիարք Հօր եւ հիւրերուն համար: Այս փուլին ՎազըՖ գիւղին եկեղեցւոյ եւ Ծխական Խորհուրդին անունով, փայտեայ խաչքարեր նուիրուեցան Տ. Յովակիմ Եպս.

Մեկնարկեց «Փոքրիկ Հրեշտակներ» Շաբաթօրեայ Դպրոցի 2024-25 Ուսումնական Տարին



«Մենք յաջորդ սերունդներին փոխանցում ենք ոչ թէ արիւն, այլ գաղափարներ եւ գաղափարներ մէջին՝ համար ամենաթանկը հայոց լեզուն է: Այդ կապակցութեամբ իւրաքանչիւր սերունդ պարտաւոր է յաջորդին սովորեցնել հայոց լեզուն»:

Այս պատգամն ստացել ենք մեծանուն գրող Ուիլյամ Սարոյեանից, ով շատ լաւ գիտակցել է մայրենի լեզուի եւ հայոց մշակոյթի կարեւորութիւնը հայրենի սահմաններից դուրս:

Այսօր, երբ օտար ափերում մշտապէս աւելանում է հայերի թիւը, ՀԱՅ մնալու եւ մայրենին սերտելու անհրաժեշտութիւնը դառնում է էլ աւելի պարտաւորեցնող եւ կարեւոր հիմնահարց: Խնդիր, որի լուծման շուրջ տարուող շարունակական աշխատանքներն իր ուշադրութեան եւ մշտական հոգածութեան կեդրոնում է պահում ԱՄՆ Արեւմտեան Թեմը՝

մաղթեց եկեղեցու հովիւ, Արժանապատիւ Տէր Խաժակ քահանայ Շահաբեանը, որից յետոյ խօսքը փոխանցեց ԱՄՆ Արեւմտեան Թեմի առաջնորդական ընդհանուր փոխանորդ, հոգեշնորհ Տէր Երեմիա վարդապետ Աբգարեանին:

Հայր Մուրթը շնորհաւորեց բոլորին 2024-25 ուսումնական տարուայ առթիւ: Նա կարեւորեց նոր տարեշրջանի սկիզբը, որը խորհրդանշական կերպով համընկել էր Մարիամ Աստուածածնի վերափոխման տօնի հետ: Ներկաներին յորդորեց սրբօրէն պահել ու պահպանել այն նուիրական ժառանգութիւնը, որն անշեղօրէն փոխանցուել է դարերով եւ յիշեցրեց նաեւ, որ յետայսու մենք ենք պարտական այն յաջորդաբար փոխանցելու մեր յաջորդներին:

Ողջոյնի խօսքով հանդէս եկաւ գիտակրթական յանձնաժողովի ատենապետ, դոկտոր Էլլի Անդրէասեան-



գլխաւորութեամբ թեմակալ առաջնորդ, գերաշնորհ Տ. Յովնան Արքեպիսկոպոս Տէրաթեանի:

Թեմապատկան «Փոքրիկ Հրեշտակներ» շաբաթօրեայ մայր դպրոցն արդէն 25 տարի շարունակ իր շուրջն է համախմբում այսօր արդէն 300-ից աւելի հայ մանուկների:

Օգոստոսի 17-ը տօնական էր Ս. Ղեւոնդեանց մայր տաճարում, որովհետեւ Սփիւռքի ամենահեղինակաւոր դպրոցներից մէկն իր դռներն էր բացել հայ մանուկների ու պատանիների առջեւ՝ աւետելով 2024-25 ուսումնական տարուայ սկիզբը: Յուզուած, բայց միեւնոյն ժամանակ առաւել ոգեւորուած էին յատկապէս առաջին դասարանցիները, ովքեր նոր էին ոտք դնում շաբաթօրեայ դպրոց՝ սովորելու եւ դաստիարակուելու հայրենասիրական ու ազգային մշտական արժէքներով ու հոգեւոր գիտակցութեամբ:

Ներկաներին բարի գալուստ

նր, ով բեղուն ուսումնական տարի մաղթեց եւ շնորհաւորեց բոլորիս՝ ԱՄՆ «Դպրոցների եւ քոլեճների հաւատարմագրման արեւմտեան ասոցիացիայի» կողմից (WASC) արտօնագիր ստանալու առիթով, որը նախադէպը չունեցող իրադարձութիւն էր սփիւռքի միօրեայ դպրոցների պատմութեան մէջ:

Ապա հաստատութեան տնօրէն, բարեշնորհ Յովհաննէս սարկավագ Գումրույեանը՝ շնորհաւորելով բոլորին տեղեկացրեց վարժարանում տեղի ունեցող դրական փոփոխութիւնների մասին՝ յաւելելով, որ յետայսու դպրոցը եօթամեայ է: Նպատակը շարունակական ուսումնառութեամբ երեխաների գիտելիքների աւելի խորը ամրապնդումն է, որի միջոցով կը կարողանան ճանաչել հայրենիքը, ընտանեկան, ազգային ու քաղաքացիական պատ-

Մատրիտի «Ռեալը» Կորսնցուց Յաղթանակի Առիթը



Սպանիոյ առաջնութեան մեկնարկային հանգրուանին ախոյեան «Ռեալը» հիւրընկալեց «Մալորքային» եւ բաւարարուեցաւ հաւասար արդիւնքով՝ 1:1: 13-րդ վայրկեանին Արքայական խումբի պրագիւցի յարձակող Ռոտրիկոն բացաւ հանդիպումին հաշիւը: 53-րդ վայրկեանին պատասխան կողմ նշանակեց քոսովոցի յարձակող Վետադ Մուրիքին:

Լեւանտովսկիի Տուպը Յաղթանակ Ապահովեց «Պարսելոնային»

Սպանիոյ առաջնութեան մեկնարկային հանգրուանին «Վալենսիան» ընդունեց փոխ-ախոյեան «Պարսելոնային» եւ պարտութիւն կրեց 1:2 արդիւնքով: 44-րդ վայրկեանին հանդիպման արդիւնքով բացաւ «Վալենսիայի» սպանացի յարձակող Ուկո Տուրոն: Առաջին կիսաաղբ աւելացուած 5-րդ վայրկեանին սպանացի յարձակող Լամին Յամալի փոխանցումէն յետոյ պատասխան կողմ նշանակեց լեհ յարձակող Ռոբերտ Լեւանտովսկին: 49-րդ վայրկեանին Լեւանտովսկին 11-մեթրանոցէն նշանակեց նաեւ գերմանացի Հանս-Տիտեր Ֆլիքի գլխաւորած խումբի յաղթական կողմ:

Փրեմիեր Լիկա. «Մանչեսթեր Սիթին» Պարտութեան Մատնեց «Չելսիին»

Անգլիոյ Փրեմիեր Լիկայի առաջնութեան մեկնարկային հանգրուանին ախոյեան «Մանչեսթեր Սիթին» հիւրընկալեց Լոնտոնի «Չելսիին» եւ յաղթեց 2:0 արդիւնքով: Գաթալոնացի Խոսեպ Կուարտիլայի գլխաւորած խումբէն աչքի ինկան նորուէկացի յարձակող Էրլինկ Հոլանտս ու խորուած կիսապաշտպան Մատէօ Կովաչիչը: Մանչեսթերեան խումբին 100-րդ հանդիպումը կատարեց Էրլինկ Հոլանտը, որ 91-րդ կողմ նշանակեց: «Չելսիի» գլխաւոր մարզիչի պաշտօնի նորամուտը Փրեմիեր Լիկայի մէջ նշեց Կուարտիլայի նախկին օգնական, իտալացի Էնջօ Մարեսքան:



«Արսենալ» Պարտութեան Մատնեց «Վուլվերհեմփթընին»

Ֆութպոլի Անգլիոյ առաջնութեան մեկնարկային հանգրուանին փոխախոյեան «Արսենալը» իր դաշտին վրայ մրցեցաւ «Վուլվերհեմփթընի» հետ եւ յաղթեց 2:0 արդիւնքով: 25-րդ վայրկեանին աչքի ինկաւ գերմանացի կիսապաշտպան Քայ Հավերը: 74-րդ վայրկեանին սպանացի Միկել Արտետայի գլխաւորած խումբի առաւելութիւնը կրկնապատկեց անգլիացի յարձակող Պուկայօ Սական:

«Մանչեսթեր Եունայթըտի» Յաղթական Մեկնարկը

«Մանչեսթեր Եունայթըտը» յաղթանակով սկսաւ Անգլիոյ Փրեմիեր Լիկայի նոր մրցաշրջանին: Հոլանտացի Էրիկ Տեն Հակի գլխաւորած խումբը «Օլտ Տրաֆորտի» իր մարզադաշտին մէջ ընդունեց Լոնտոնի «Ֆուլհեմին» եւ յաղթեց նուազագոյն արդիւնքով: 87-րդ վայրկեանին արժանթինցի յարձակող Ալեխանտրօ Կարնաչօյի փոխանցումէն յետոյ յաղթական կողմ նշանակեց հոլանտացի յարձակող Ճօշուա Ջիրկզէն:

«Լեւերկուզեն» Նուաճեց Գերմանիոյ Սուփերգաւաթը



Գերմանիոյ ախոյեան եւ գաւաթակիր Լեւերկուզենի «Պայերը» նուաճեց Գերմանիոյ սուփերգաւաթը: Սպանացի Խապի Ալոնսոյի գլխաւորած խումբը յետխաղային 11-մեթրանոցներով 4:3 արդիւնքով պարտութեան մատնեց Պոնտեպետիկայի փոխ-ախոյեան «Շթուփկարթին»: Հիմնական ժամանակը աւարտեցաւ հաւասար՝ 2:2:

«Ինթերը» Աւելացուած Ժամանակի Ընթացքին Կորսնցուց Յաղթանակի Առիթը

Իտալիոյ առաջնութեան մեկնարկային հանգրուանին ախոյեան «Ինթերը» հիւրընկալեց «Ճենոային» եւ յաղթանակը բաց թողեց աւելցուած ժամանակի ընթացքին՝ 2:2: 20-րդ վայրկեանին հանդիպման արդիւնքը բացաւ «Ճենոայի» իտալացի պաշտպան Ալեսանտրօ Վոլչաքոն: 30-րդ վայրկեանին հաւասարութիւնը վերականգնեց ֆրանսացի յարձակող Մարքուս Դուրամը: 85-րդ վայրկեանին «Ինթերի» երկրորդ կողմ դարձեալ նշանակեց Մարքուս Դուրամը: Աւելացուած 6-րդ վայրկեանին «Ճենոային» պարտութենէն փրկեց պրագիւցի յարձակող Ժուլիոյ Մեսիասի կողմ: Հայաստանի հաւաքականի նախկին աւագ, կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանն «Ինթերի» մեկնարկային կազմն մէջ էր: 16-րդ վայրկեանին ան զգուշացուեցաւ դեղին քարտով: 66-րդ վայրկեանին Մխիթարեանին փոխարինեց իտալացի կիսապաշտպան Տաւիտէ Ֆրաթեկին:

WTA-1000. Էլինա Աւանեսեանը Պարտուեցաւ Երրորդ Շրջանին



Աշխարհի 60-րդ ռակէթ Էլինա Աւանեսեանը պարտուեցաւ ԱՄՆ-ի Մինսինաթի քաղաքին մէջ կատարուող WTA-1000 մրցաշարի երրորդ շրջանին: Հայաստանի ներկայացուցիչը մրցեցաւ աշխարհի 17-րդ ռակէթ, ռուս Լիւսմիլա Սամոնովայի հետ, որ առաւելութեան հասաւ 4:6, 6:0, 6:3 արդիւնքով Մրցախաղը տեւեց 2 ժամ: Մինսինաթիի WTA-1000 մրցաշարի մրցանակային հիմնադրամը 3,2 միլիոն տոլար է:

Ժոտայի Եւ Սալահի Կոլերը Յաղթանակ Ապահովեցին «Լիվերփուլին»

Անգլիոյ առաջնութեան մեկնարկային հանգրուանին «Լիվերփուլը» հիւրընկալեց Փրեմիեր Լիկայի նորեկ «Իպսվիչին»: Հոլանտացի Աունէ Սլոտի նորամուտն Անգլիոյ առաջնութեան մէջ յաղթական էր: «Լիվերփուլը» առաւելութեան հասաւ 2:0 արդիւնքով:

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

Հանգուցեալ Անի Թաւուքճեանի մահուան տխուր առիթով, «Մասիս» շաբաթաթերթի վարչութիւնն ու խմբագրակազմը իրենց խորին ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի դատեր Շողիկին, քրոջ՝ Տէր եւ Տիկ. Յարութ եւ Շուշան Վարդանեանին, եղբօր՝ Տէր եւ Տիկին Գաբրիէլ եւ Մարիա Մոլոյեանին, եւ անմիջական ընտանիքի անդամներուն, հարազատներուն եւ բարեկամներուն:

Ինչպէս է Նաւթ Եւ Գազ Արտահանող Ատրպէյճան

Շարունակուած էջ 14-էն

նահանուած է նաւթ եւ ծրագրուած է եռապատկել գազի արդիւնահանումը: Իսկ այս միջոցառման նախագահը կը լինի մի մարդ, ով նախկինում 20 տարի ղեկավար պաշտօններ է զբաղեցրել պետական նաւթային ընկերութիւնում:

Ատրպէյճանի բնապահպանական պատկերը շատերի մօտ հարցեր է առաջացնում. Երկրին դեռ չի յաջողուել լուծել կենցաղային աղբի հաւաքման ու վերամշակման խնդիրը:

Ատրպէյճանը յայտնի է իր արեւոտ օրերի մեծ քանակով, իսկ Պաքոն նոյնիսկ «Քամիների քաղաք» են անուանում: Էներգետիկայի միջազգային գործակալութեան տուեալներով՝ Ատրպէյճանում էներգիայի վերականգնող աղբիւրներ (ներառեալ հիդրոէլեկտրակայաններ) բաժինը կազմել է ընդհանուր արտադրութեան ընդամենը 1%-ը:

«Կլիմայի պաշտպանի դեր խաղալը եւ հանածոյ վառելիքի շահերի բախմանը հրաւիրելը ժամանակի վատնում է», - յայտարարել է Oil Change International-ը՝ Ատրպէյճանի վարքագիծն անուանելով երկրի հեղինակութեան «Կանաչ մաքրում»:

COP29-ը «Կանաչաւորման արշաւ» են անուանում եւ՛ ատրպէյճանցի լրագրողները, եւ՛ միջազգային իրաւապաշտպանները՝ նշելով, որ միջոցառումն անցկացւում է ՁԼՄ-ներին, ինչպէս նաեւ ուժեղ քննադատների դէմ բռնաճնշումների նոր ալիքի ժամանակ:

Միջազգային իրադարձութիւնները՝ սեփական ձեռքբերման քօղի տակ

Ատրպէյճանում իշխանութիւնները նախկինում հանրութեանը ներկայացրել են խոշոր միջազգային իրադարձութիւններ՝ որպէս երկրի եւ նրա մշտական ղեկավար Իլհամ Ալիեւի միջազգային մեծ յաջողութիւն: Այդպէս եղաւ «Եւրատեսիլ» երգի մրցոյթի, «Ֆորմուլա 1»-ի աւտոարշաւների, Եւրոպական խաղերի եւ այլ խոշոր իրադարձութիւնների դէպքում:

Ատրպէյճանը նոյնիսկ Ողիմպ-

իական խաղերն ընդունելու յայտ էր ներկայացրել, թէեւ՝ անյաջող: Բայց դա չի անգարեց տարբեր քաղաքներում սպորտային քաղաքի, մարզադաշտի ու մարզահամալիրների կառուցմանը, որոնք մինչ օրս ողիմպիական են կոչուած:

Այս ամէնն էլ բաւական է հասկանալու համար, որ Ատրպէյճանն օգտագործում է միջազգային խոշոր իրադարձութիւնները սեփական հեղինակութիւնը սպիտակեցնելու համար՝ գիտակցելով, որ կաղում է մարդու իրաւունքների խախտումներից: Ընդ որում, բոլոր այս միջազգային իրադարձութիւնների համատեքստում բողոքի ձայն բարձրացնող իրաւապաշտպանները կամ ակտիւիստները տարբեր մեղադրանքներով շաբաթներ անց յայտնուած են անազատութեան մէջ:

Ի դէպ, առնուազն հակասական ու տարօրինակ է, որ 2022 թուականի Դեկտեմբերին բողոքի ձայն բարձրացրած եւ Լեռնային Ղարաբաղի ճանապարհը բլոկադայի մէջ պահող «Բնապահպան ակտիւիստները» այժմ լուռ են:

Իշխանութիւնների կողմից կազմակերպուած վերուղտարուող կեղծ ակտիւիստները մի քանի ամսով փակել էին Լեռնային Ղարաբաղից Հայաստան տանող միակ ճանապարհը՝ զրկելով տեղի բնակիչներին տարրական պահանջները բաւարարման նպատակով իրականացուող փոխադրումներից ու տեղափոխութիւններից:

Այն ժամանակ էկոակտիւիստները ներկայացրած էին որպէս իշխանութիւնների կողմից աջակցուող կարեւոր ուժ: Սա բացառիկ իրավիճակ էր Ատրպէյճանի համար, որովհետեւ եթէ Ալիեւի ուժերը սեփական շահը չունենայ, բնապահպանական կամ մէկ այլ ոլորտի որեւէ բողոքի շարժում կը ճնշուի անմիջապէս եւ մէկ օր անգամ չի շարունակուի, մասնակիցներն էլ՝ կը յայտնուեն բանտերում: Դեռեւս պարզ է, բայց ենթադրել կարելի է, թէ COP29-ը նման էկոակտիւիստների նոր բողոքի պատճառ կը առնայ, թէ՛ ոչ:

«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»

Յաւերժական Առեղծուածներու Լարիիմփին

Շարունակուած էջ 15-էն

Ուղիղեալ եկեղեցական մը իր կոչումն էր հրաժարի, բաւական է որ օրինական պայմանները յարգէ եւ ընդհանուր բարոյականութեան դէմ չմեղանայ: Կարծեմ թէ այս բացայայտ վերապահութիւնս բաւական է իմ համոզման ուղղապէս դատելու, եւ զիս մոլեռանդ եւ անխորհուրդ աւանդապահ մը չստեղծուի:

[...] Համառօտիւ միտքս յայտնած ըլլալու համար աւելցնեմ, որ նախնական եկեղեցւոյ մէջ կուսակրօնութիւնը եկեղեցականութեան պայման չէ եղած, թէպէտ կամաւոր յանձնառու չէ մերժուած, ինչպէս Յովհաննէս եւ Պօղոս առաքելոց մէջ եւ Արիստակէս՝ մեր սուրբ հարց մէջ: Եկեղեցականութիւնը իբրեւ ժողովուրդի հովուութիւն անուանացելոց սեփական եղած է, մոյմիսկ եպիսկոպոսութեան եւ հայրապետութեան աստիճաններուն մէջ: Իսկ կուսակրօններ իրենց կոչումը անաղարտ պահելուն համար աշխարհէ հեռու եւ աշխարհիկ յարաբերութիւնները գերօվանքերու մէջ փակուած են, իրենց նուիրական կենցաղը չվտանգելու համար: Այժմեան կուսակրօններու սովորական դարձած աշխարհի եւ աշխարհիկ յարաբերութեանց հետ համարձակ շփումը նախնական օրինաց եւ սկզբնական սովորութեանց համաձայն չէ, բայց այդ մասին յետադարձ գործադրելն ալ դիւրին չէ: Եթէ արեւելեան եկեղեցիներու մէջ պահուած անուանացեալ եկեղեցականութեան գարգացումը բարձրացայ, եւ եթէ իւր առջեւ աստիճաններու բարձրացման դուռերը բացուին, կուսակրօն եկեղեցականութիւնը կրնայ հետզհետէ նուազիլ, եւ իւր նախնական բացառիկ եւ պատահական չափին վերածուիլ: Բայց այս եկեղեցւոյ բարեկարգութեան կէտ մըն է [...] գուցէ առաջիկային այն ալ շօշափեմ»:

Հայ եկեղեցւոյ բարեկարգութիւնը հական անհրաժեշտութիւն մըն է, որ կը ձգտի ծառայելու անոր հաւատացեալ հօտին դիմագրաւած արդի բազմաթիւ մարտահրաւէրներու յաղթահարման եւ առօրեային բխող կարիքներուն: Սրբազան աւանդութիւնը արգելք մը չէ, այլ պահանջ մըն է՝ զայն ապահովելու ժամանակակից կեանքի համատեքստին մէջ: Եկեղեցւոյ

Հմտ. Հակոբյան, Վգ, Կանոնագիրք հայոց, Ա, Երևան, Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1964, էջ 450:

Հմտ. Մաղաքիա արք. Օրմանեան, Խոն եւ Խօսք, Երուսաղէմ, 1929, էջ 49-50:

Մեկնարկեց «Փոքրիկ Հրեշտակներ»

Շարունակուած էջ 17-էն

Կանելութիւնը, ինչպէս նաեւ էլ աւելի սերտել Հայաստանի պատմութեան, աշխարհագրութեան, մշակոյթի մասին, որն էլ կը նպաստի հայցի դաստիարակութեան զարգացմանը:

Ինչպէս միշտ բարեշնորհ Յովհաննէս սարկաւազ Գումրուցեանը յորդորեց խօսել մաքրամաքուր հայերէնով, սիրել ուսումը եւ սրբութեամբ պահել հայի անունը:

Դպրոցական օրը տօնական էր նաեւ նրանով, որ աշակերտներին շնորհաւորելու էին եկել հաստատութեան երկարամեայ բարեկամները՝

պատմական եւ աստուածաշնչական հիմքերը ստույգ անոր կու տան ձկունութիւն, մինչդեռ բարեփոխումները կը նպաստեն անոր հաստատութեան եւ վերածնութեան: Կուսակրօն եւ ամուսնացեալ եկեղեցականութիւնը եկեղեցիին պէտք է ծառայէ ոչ թէ տէր ընդ ծառայի փոխարարութեան, անհաւասար դիրքերու՝ բարձրի եւ ցածի խտրականութեան անգիր օրէնքով, այլ իւրաքանչիւրը իր ստանձնած պաշտօնին մէջ ի Յիսուս Քրիստոս սիրոյ ծառայութեան հաւասար դիրքերու եւ իրաւունքներու կարգավիճակով:

«Կենցաղ եկեղեցականաց՝ գիրք աշխարհականաց»՝ Եկեղեցականներուն կենցաղը աշխարհականներուն համար գիրք (օրէնք) է՝ հինգ եկող այս ճշմարտացի խօսքը կու գայ անսուտ դրսևորելու այն իրողութիւնը, որ առաջին հերթին հոգեւորականն է եկեղեցւոյ բարոյական հեղինակութեան արտայայտիչը, ուրկէ հաւատացեալը դասեր կը քաղէ իր հոգիի փրկութեան եւ քրիստոնէավայել կենցաղավարութեան համար: Եթէ մոյմ եկեղեցականը շեղի իր սրբակենցաղ վարքագիծէն ու զանազան եկեղեցւոյ յայդ ոսկեծոյլ տարբերութիւնը լինելու եւ ունենալու միջոց, կոչումի գիտագնութեան, անմոյմի ծառայասիրութեան, սրբութեան, փառքին, ուժին եւ նիւթական հարստութեան ձգտելու միջոց, իր անձին եւ գործին մէջ առաջին հերթին կը նսեմացնէ եկեղեցին, որուն ծառայութեան ինք կոչուած է: Այնուհետեւ ան չի կրնար յարգանք պարտադրել հաւատացեալ մարդուն, որուն աչքին ոչ միայն ինք, այլեւ իր ներկայացուցած եկեղեցին ալ հեղինակազրկուած է, նման այն թանկարժէք աղամանին, որուն վրայ յառաջացած նուազագոյն բիծն անգամ կ'արժեքը կէ գայն: Եկեղեցականը հարկ է, որ ըլլայ աստուածային լոյսի ընդունարան եւ բանի ու գործով այդ մոյմ լոյսը արտացոլացնել կարենայ հաւատացեալ հայ մարդուն վրայ: Պատմութեան այս կոչն է, որ ինք իբրեւ արժանահաւատ հրաւեր մը՝ Բանին կենաց քարոզութեամբ միշտ պիտի կարդայ իր հայկազուն հօտին դիմելով: »Եկայք շինեսցուք սուրբ գիտութեան լուսոյ. քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի» (Հարական):

Ս. Աստուածածնայ Վերափոխման Տօնը

Շարունակուած էջ 17-էն

Մանուկեանին եւ Տ. Փաթրիք Քրեպիսկոպոս Սուխախոյին:

Յուշանուէրներ պատրաստուած էին նաեւ «Հայճար»ին եւ այլ ազգայիններու համար, որոնք իրենց նպաստը բերած էին գիւղի աղօթատան վերականգնման համար: Նոյն առթիւ՝ Ամեն. Ս. Պատրիարք հայրն

ալ Տ. Փաթրիք Քրեպիսկոպոս Սուխախոյին նուիրեց իր ձեռագ խաչը:

Ս. Աստուածածնի տաղաւարին առթիւ դէպի Վազըֆըլը գիւղի կազմակերպուած ուխտագնացութեան ծրագիրն այսպիսով հասաւ իր աւարտին: Ամեն. Ս. Պատրիարք Հայրը յաջորդ օր երեկոցեան վերադարձաւ իր աթոռը:

www.massisweekly.com
Weekly News Updates

ԳԱՅԱՆԷ ԳԷՈՐԳԵԱՆ

ARMENIAN
INDEPENDENCE DAY
FESTIVAL

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՆ
ՓԱՌԱՏՈՆ



SUNDAY
SEPTEMBER
22
2024
11:00AM

VERDUGO PARK
GLENDALE

1621 CANADA BLVD
GLENDALE, CA 91208

ORGANIZED BY
NOR SEROUNT CULTURAL ASSOCIATION

To reserve your vendor booth, please call Nor Serount Cultural Association
Ձեր կրպակները ապահովելու համար, հեռաձայնեցե՛ք՝ Նոր Սերունդ Միութիւն

For More Info:
(818) 391-7938 | www.norserount.com



Live Music |
Armenian Food
Kids Games |
Arts & Crafts

FREE
ADMISSION
ՄՈՒՏՔԸ
ԱԶԱՏ

